

# ՄԱՐԶԻԿ

հսլս


مارزیک

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

**marzig**

SPORTS MAGAZINE

3007 SURH, 2011, ԹԻԻ 12 (354) - VOL. XXX N° 12 السنة الثلاثون - العدد الثانية العشر



## ՍԱՍՈՒՆ



ԴԷՊԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ

ՍԱՍՈՒՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

**Հ.**Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը իր 103րդ մասնաճիւղը ունեցաւ Ուրբաթ, 25 Նոյեմբեր 2011ին, երբ Պէյրուսի արեւելեան արուարձաններէն Ռաուտայի մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի նոր մասնաճիւղի մը հիմնադրութիւնը, ներկայութեամբ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներու եւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ականներու:

Ժողովին Շրջանային Վարչութիւնը յայտարարեց մասնաճիւղին նշանակեալ վարչութեան կազմը, որ բաղկացաւ հետեւեալներէն.-

Եղբ. Կիրակոս Գարակէօզեան- ատենապետ

Եղբ. Կարօ Պասմաճեան- քարտուղար  
Եղբ. Եսայի Մնասա- գանձապահ

Եղբայրներ Սարգիս Յակոբեան եւ Սեդրակ Յաճիմանուկեան- խորհրդականներ

Նշանակեալ վարչութիւնը նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքները պիտի տան յառաջիկայ ամիսներուն գումարելու մասնաճիւղին անդամական ընդհանուր ժողովը եւ յառաջացնելու ընտրովի անդրանիկ մասնաճիւղը:

Հ.Մ.Ը.Մ. Ռաուտա կը հանդիսանայ Լիբանանի շրջանի 10րդ մասնաճիւղը:

## ԵՂԲ. ՍՏԵՓԱՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ ԿԸ ՎԵՐԸՆՏՐՈՒԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ ՓՈԽ ՆԱԽԱԳԱՀ



9 Դեկտեմբեր 2011ին, Երեւանի մէջ տեղի ունեցաւ Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի ընդհանուր ժողովը, որ Համահայկական Ծրղ մարզախաղերու տեղեկատուութիւնը լսելէ ետք, կատարեց գործադիր կոմիտէի ընտրութիւն եւ հաստատեց նոր կանոնադրութիւն:

Համահայկական Խաղերու գործադիր կոմիտէի նախագահ վերընտրուեցաւ մարմնամարզի նախարար Իշխան Զաքարեան, իսկ փոխ նախագահներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան եւ Ալպէրթ Պոյաճեան: Կոմիտէի գլխաւոր քարտուղար ընտրուեցաւ Բագրատ Բուռնագեան: Միաձայնութեամբ վերընտրուեցան Խաղերու վերստուգիչ յանձնաժողովի եւ գործադիր կոմիտէի անդամները, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Ստեփան Տէր Պետրոսեան, Հրաչ Սիսեռեան եւ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Յարութ Կարապետեան: Եղբայրներ Հրաչ Տէր Սարգիսեան եւ Սարգիս Տէր Պետրոսեան կոմիտէին մաս կը կազմեն իբրեւ պատույ անդամներ, իսկ եղբ. Պերճ Հալլաճեան (Աղբքսանդրիայէն)՝ իբրեւ հաշուեքննիչ:

Ժողովին ընթացքին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի հրամանով, Համահայկական Խաղերու Գործադիր Կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեան Հայաստանի Հանրապետութեան անձնագիր շնորհեց եղբ. Հրաչ Տէր Սարգիսեանին:

Տեղին է նշել, որ Համահայկական Խաղերու գործադիր կոմիտէի փոխ նախագահ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեան, Օգոստոսին, Համահայկական Ծրղ Խաղերու փակման հանդիսութեան, նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ արժանացաւ յատուկ յուշամետալի՝ Խաղերուն կազմակերպման եւ իրականացման մէջ ունեցած իր ներդրումին համար:

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի նորընտիր Կեդրոնական Վարչութեան պաշտօնական այցելութիւններու ծիրին մէջ, Ուրբաթ, 16 Դեկտեմբեր 2011ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատւիրակութիւն մը, գլխաւորութեամբ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, այցելեց Հայ Կաթողիկէ Պատրիարքարան եւ ծանօթացման հանդիպում մը ունեցաւ Ներսէս ԺԹ. Թարմունի Պատրիարքին հետ:

Ապա, պատուիրակութիւնը այցելեց Սիջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան կեդրոն եւ հանդիպում մը ունեցաւ հայ աւետարանական համայնքի հոգեւոր պետ վեր. Մկրտիչ Գարակէօզեանի հետ: Հանդիպումին ներկայ գտնուեցաւ Հայկազեան համալսարանի նախագահ վեր. Փօլ Հայտոսեան:

Հուսկ, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները այցելեցին Ազգային Առաջնորդարան եւ տեսակցութիւն մը ունեցան Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի հետ:



# ԹԻՒՆԻՆ ՆԻՒՐԵՐԸ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزیک مجله ریاضية شهريّة تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 30ԴՂ ՏԱՐԻ, 2011, ԹԻՒ 12 (354)



## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Ակնարկ 7
- Մեր Տեսակցությունները 10
- Պատմություն 13
- Մասնաձիղէ Մասնաձիղ 20
- Մեր Կորուստները 36



25



21

## ԲԱԺԻՆՆԵՐ

- Անդրադարձ 3
- Միջազգային 18
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



29

**ԽՄԲԱԳԻՐ**  
 Վիգեն Աւագեան

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ**  
 Սեդա Պէշլեան (Լիբանան),  
 Սեւան Նազարեան (Ֆրանսա),  
 Մարո Քէշիշեան (Արեւմտեան Մ.  
 Նահանգներ), Յակոբ Խաչատուրեան  
 (Արեւելեան Մ. Նահանգներ), Տիրան  
 Շահինեան (Գանատա), Ռազմիկ  
 Յովհաննիսեան (Հայաստան)

**ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ**  
 Պատրիկ Կիւլպենկեան, Գրիգորիս  
 Պողարեան, Արօ Մոսիկեան  
 (Լիբանան), Յարութ Մատենլեան  
 (Արեւմտեան Մ. Նահանգներ),  
 Զարեհ Տէրվիշեան (Գանատա)

Էջադրում - Արշո Պալեան  
 Գրաշարություն - Շողիկ Պոյաճեան  
 Colour Seperation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրություն



**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ**  
 Պուրժ Համուտ, ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

**ՑՐԻՈՒՄ**  
 Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 4000 լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ծշողած է 48000 լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$70,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$75):



Ն  
Մ  
Ք  
Ը

# ԴԵՊԻ ՀԱՅՈՒԹԻՒՆ

(ՍԱՍՈՒՆԻ ՖՈՒՅՈՒՊՈՂԻ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ)

**Օ**գոստոս 2011-ին ի վեր նորութիւն մը կայ հայ մարզական կեանքին մէջ: Ուշագրաւ նորութիւն մը, որ տակաւին անհրաժեշտ լուսարձակները չէ հրաւիրած իր վրան: Համահայկական 5րդ մարզախաղերու յայտնութիւնն է այդ՝ Սասունի ֆութպոլի խումբը, որ երեւան ներկայացաւ 300 համակիրներու պատուիրակութեամբ եւ սեփական դրօշով՝ սպիտակ կտաւի վրայ նարնջագոյն մեծ վահանով, վերելը պատկերուած Մարութա սարը, ներքելը՝ Սասուն գրութեան տակ, կապոյտ եւ սպիտակ երիզներու վրայ, յաւերժութեան խորհրդանշանը՝ նարնջագոյն, կապոյտ եւ սպիտակ գոյներով:

Սասունը սովորական շրջան մը չէ, որպէսզի Սասունի ֆութպոլի խումբը ըլլայ սովորական խումբ մը: Մեր ժողովուրդի պատմական հմայքին ու փառքին օրրաններէն մէկն է ան: Իր Մեղրագետով, Արածանիով ու Մշոյ դաշտով Սասունը սրբազան գիրերով դրոշմուած է հայ աշխարհի պատմութեան եւ մեր ժողովուրդի սրտին մէջ: Սասնոյ լեռներէն դուրս եկած են ռազմի եւ գեղեցկութեան բոլոր աստուածները: Կաթնաղբիւրի անոր փրփուրներէն ելած է մեր Քուռկիկ Ջալալին:

Սասունը ազատ ու անկախ տեսնելու տենչը Հ.Ս.Ը.Մ.ական սերունդներու համար եղած է ու կը մնայ կապոյտ երագ, իրական մորմոք: Հայ սկաուտին ազգային դաստիարակութեան անսպառ աղբիւրն է Սասունը իր աննման հերոսներով՝ Սասունցի Դաւիթէն մինչեւ Յովնան Խութեցին, Սասունցի Մուշեղէն մինչեւ Կարօ Սա-

սունին: Հայ մարզիկին յաղթանակի երգն է Սասունը, ցնծութեան քայլերգը, որ կ'երգուի ամէն ուրախ առիթի՝ «Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին», «... Գնում էին դէպի Սասուն, օգնելու Անդրանիկին»:

Համահայկական մարզախաղերուն մասնակցութեամբ, սասունցիներ յաղթել-պարտուելէ աւելի՝ Սասունի ոգին սփռեցին ամէնուրեք: Անոնք գտան հայութեան իրենց երկրորդ կէտը, իսկ հայութիւնը գտաւ իր առաջին կէտը: Հողի եւ արեան կանչով, ազգը վերագտաւ իր ամբողջութիւնը, բախտաւոր օր մը հայրենիքին ամբողջութիւնն ալ գտնելու յոյսով:

Սասունցիներ օրեր շարունակ ապրեցան անկախ հայրենիքի մէջ ըլլալու քաղցրութիւնը: Անոնք ջերմ ընդունելութեան արժանացան հայաստանաբնակ իրենց ազգակիցներուն կողմէ: Ծիծեռնակաբերդ, Էջմիածին ու Սարդարապատ այցելութեամբ ոգեւորուեցան, յուզուեցան եւ նոր էջ բացին ոչ միայն հայ մարզական պատմութեան, այլեւ՝ հայ ժողովուրդի համախմբման եւ միասնութեան համար տարուող ճիգերուն մէջ:

Այսպէս, 2011 տարին մարզական կեանքի ծամբով հայութեան բերաւ կարելոր նորութիւն մը, որուն պէտք է գորգուրալ անպայման, որպէսզի Արեւմտահայաստանի հայութեան մասնակցութիւնը համահայկական նման նախաձեռնութիւններու որբ չմնայ, այլ՝ շարունակուի եւ աւելի ընդլայնի, իր շուրջ համախմբելով բռնագրաւեալ հողերու տարածքին ապրող հայու բոլոր բեկորները, ուղի հարթելով անոնց վերադարձին՝

Դէպի հայութիւն, դէպի Հայաստան:

# «ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ»Ը՝ ՍԱՍՈՒՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԹԻՄԸ



Համացանցի [www.akunq.net](http://www.akunq.net) կայքէջին առնելով, ստորև կարգ մը յապաւումներով կու տանք Պոլսոյ «Ակոս» թերթին (2011, թիւ 803) անդրադարձը՝ Սասունի ֆութպոլի խումբին համահայկական խաղերու մասնակցութեան:

### ՍԱՐԳԻՍ ՍԵՐՈՒԲԵԱՆ

Ժամը 7ին մտանք [Պատմողը՝ Սարգիս Սերոբեան «Ակոս»ի հայկական բաժինի խմբագիրն է- «Ս.»] Վազգէն Սարգսեանի անուան մարզադաշտ, որպէսզի մասնակցենք բացման արարողութեանը, որը տեղի էր ունենալու ժամը 9.30ին: Դեռ նոր էինք զբաղեցրել մեր տեղերը, երբ տրիբունայի վրայ երկուորեակները նկատեցի, ովքեր Հայաստանի դրօշով շապիկ էին հագել: Միանման ու համաչափ քայլերով անկիւնային ուղով նրանց քայլքն այնքան հաճելի ու սիրելի էր, որ չկարողանալով դիմանալ՝ իջայ հարթակի ծայրն ու փշալարի հետեւից ձայն տուեցի. «Օրիորդներ, չէի՞ք ասի թէ, որտեղից էք ձեռք բերել ձեր շապիկները, թոռներիս համար ուզում եմ գնել»:

Սկզբից զարմացան, սակայն փշալարերի այն կողմից մի իրաւասու օգնութեան հասաւ եւ շրջուելով աղջիկներին՝ հրահանգեց. «Անմիջապէս զանգէք ձեր մօրաքրոջն ու ասէք, թող այս պարոնի թոռների համար շապիկ կարի»:


Հասցէ ու հեռախօսահամար փոխանակեցինք, այնուհետեւ զոյգերը, որոնցից մէկի անունը Աստղիկ էր, միւսինը՝ Լիանա, շարունակեցին իրենց համահունչ գալ-գնալը: Նրանք ձեռքի շրջով ջուրը մի ակընթարթում գլխներին էին դնում, յետոյ՝ իջեցնում:

Յետոյ իմացայ, որ մարդը, որն օգնութեան էր եկել կազմկոմիտէի անդամ, Հայաստանի պետական ֆիլահարմոնիկ նուագախմբի տնօրէն Գագիկ Մանուսեանն էր, բացի այդ՝ մեր անոյշ երկուորեակների հայրը:

Աստղիկն ու Լիանան բազմիցս անցան մեր տրի-

**Օ**գոստոսի 13-20ը Հայաստանի մայրաքաղաք Երեւանում տեղի ունեցած համահայկական ճրգ խաղերը բացման արարողութեան նման հոյակապ արարողութեամբ աւարտին հասան: Ռեկորդակիր մրցաշարին 125 քաղաքներից մօտ երեք հազար մարզիկ էր մասնակցում: Այս տարուայ մրցաշարի վրայ իր կնիքը թողեց Թուրքիայից առաջին անգամ մասնակցող Սասունի թիմը: Սասունի թիմին անձամբ նախագահ Սերժ Սարգսեանը յանձնեց «Համահայկական ճրգ խաղերի յայտնութիւն» մրցանակը: Սասունցիները խաղերից յետոյ ժամանակն անց էին կացնում իրենց համաքաղաքացիների հետ:

Հայաստանեան տպաւորութիւնների մասին «Ակոս» գրուցեց պատուիրակութեան կազմակերպչական հարցերով զբաղող Էֆրիմ Բաղի [Ուստապահ Սասնոյ եւ Մուտքի (Մուտկանի) հայերու ընկերային փոխօգնութեան եւ համերաշխութեան մշակութային միութեան՝ «Սասնուտ»-ի-«Ս.»], Բեսսէ Քապաքի եւ մարզիկների հետ:



Համահայկական խաղերուն ներկայ սասունցիներ:



Սասունցի պատուիրակներ Հայաստանի երիտասարդուիթան և մարմնագործ մախարար Իշխան Չաքարեանի մաս:

բունայի առջևից, մինչև խմբերը կը սկսէին անցնել: Նրանք չէին զլանում ձեռքով անել իրենց հորեղբորը, որի հետ նոր էին ծանօթացել:

Երկու օր յետոյ գանգեցին ինձ: Կենտրոնում՝ նախկին «Արմենիա», ներկայիս՝ «Մարիոտ» հիւրանոցի առաջ հանդիպեցինք, ինձ նուիրեցին թոռներիս շապիկները: Իմ նուէրն էլ իրենց տներում պահելու համար հովուի նուէր էր՝ Սասունի Մարաթուկ եկեղեցու պատերի շաղախից, որը մարդկանց պահպանում էր օձի, բազմոտանի միջատի եւ կարիճի խայթոցից, եւ Մարութա լեռան հողերից մէկական փունջ:

125 քաղաքներից եկած 3200 մարզիկների մարզադաշտ մտնելու արարողութիւնն սկսուեց մեծ շուքով: Մրցուող վրայով քայլերթ կատարող խմբերը հրապարակում տեղ են գրադեցնում, աւելի ուշ՝ երաժշտութեամբ ոգեւորուած պար, աշխուժութիւն, հրավառութիւն, գրոյցներ, արարողութիւնից յետոյ բեմ դուրս եկած արուեստագէտների երգեր... Ամէն ինչ այնքան ներդաշնակ ու հիանալի էր, որ... Այդ ընթացքում մեր ստամբուլցի արուեստագէտ Սիպիլ Փեթրոսոյլուն «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» երգով արժանացաւ ծափահարութիւնների: Այս երգի բառերն ինձ յիշեցրեցին տարիներ առաջ Սոփիայում հանդիպած սասունցի մի կնոջ ասածները, ով իմանալով, որ պտոյտի եմ դուրս եկել Սասունում, ասաց. «Ես էլ մի անգամ իմ աչքով տեսնեմ աննման Սասունն ու նոր մեռնեմ»:

Հայաստանում սասունցիները շատ էին: Եթե Մարութա լեռան ողջ հողը պարկերով տանք, նորից բոլորին չի հերիքի: Մարդիկ այնքան կարօտ են քաշում, որ երբ քայլուղու վրայ տեսան սասունցիներին՝ ձեռքներին Սասունի սպիտակ դրօշը, երկնագոյն եւ նարնջագոյն համազգեստով, ականջները խլացնելու չափ բարձր ծափահարութիւններով պատուացոյց կատարեցին: Ամէն դէպքում սասունցիներն առաջին անգամ էին մասնակցում համահայկական խաղերին: Հէնց այս պատճառով էր, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանը համահայկական խաղերի մասնակիցների պատուին «Փարւանա» ռեստորանում կազմակերպած ընթրիքի ժամանակ Սասունի խմբի պատուոգիրը ստանալու համար իր սեղանից արագ վեր կենալով եկաւ եւ էֆրիմ Բաղից ստացաւ իր նուէրը: Բոլորիս շնորհաւորեց եւ մարզիկների

հետ միասին նկարուեց. անմահացաւ այս պատմական հանդիպումը:

Սասունցիները մասնակցեցին խաղերին, յաղթեցին, յաղթուեցին, ոչ ոքի արեցին... Վերջում մրցանակ չստացան, սակայն փակման արարողութեան ժամանակ նորից նախագահ Սերժ Սարգսեանի ձեռքից ամբողջական ընկուզենուց քանդակուած, հայկական մոտիվներով փորագրուած շքեղ ջենտրլմենական գաւաթ ստացան: Փոխարէնը էֆրիմ Բաղը Սարգսեանի վզին գցեց Սասունի սպիտակ ժապաւէնը, որը բոլոր սասունցիները կրում էին:

**ԷՖՐԻՄ ԲԱՂ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԱՏՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԿԱՐՕՏՈՒՄ ԵՆ»**

Հետաքրքրութիւնը, որը կար մեր հանդէպ, շատ աւելին էր, քան սպասում էինք: Բոլորն ամէն բոլորէ, ամէն վայրկեան անընդհատ մեր հետեւից վազում էին, որպէսզի խօսեն, ծանօթանան, ճաշի հրաւիրեն: Ինձ ասացին. «90ամեայ մօրեղբայր ունենք, ուզում է քեզ անպայման տեսնել»: Իր գիւղը մի անգամ տեսել է՝ մէկը, ով նախկինում գիւղ էր գնացել, նկարել ու բերել էր: Այդ նկարահանման մէջ յաճախակի իմ անունն էր յիշատակուում: Երբ գիւղացիները ասել են, թէ թուրքիա-



Նախարար Իշխան Չաքարեան Սասունի պատուիրակութեան անդամներուն կու տայ յատուկ յուշանուէրներ:

յից սասունցիներ են եկել, ասել է. «Անպայման նրանց ինձ մօտ բերէք»: Գնացինք, զրուցեցինք: Դուրս եկաւ, որ երկուսս էլ նոյն գիւղից ենք եղել: 1963 թ. երբ մենք Մուտքից հեռացանք, բնակուեցինք մի տան մէջ, որը 90ամեայ պապիկի ընտանիքի լքած տունն էր:

Տատիկս ինձ պատմել էր, որ մեր գիւղի տանը նախկինում ապրողներ են եղել: Երբ նոյն անունները լսեցի պապիկից, ոգեւորուեցի, շատ յուզուեցի: Երբ տեսաւ գիւղի ու իր մօրից լսած ընկուզենու ծառի նկարները, շատ ուրախացաւ: Իսկ երբ Մարութա լեռան վրայից բերած հողը տուեցի, սկսեցինք լացել: Հողը վերցրեց, համբուրեց, լեզուն պապանձրւեց: Երբեւէ չտեսած հողին սարսափելի կարօտել էր:

Այնտեղ ապրող սասունցիներն ու բոլոր ծագումով անատոլիացիները մեր կարօտն են քաշում: Մեզ փաթաթուելով՝ հայրենիքի հօտն էին առնում: Մեր բեռն արդէն ծանրացաւ: Ցանկանում են, որ ամէն մրցաշարի մասնակցենք: Եթէ լուրջ պատրաստուենք ու գնանք, աւելի շատ գոյն կարող ենք տալ այդ ամէնին: Յուսամ, որ այս գնալ-գալը լաւ կ'անդրադառնայ նաեւ Թուրքիա-Հայաստան յարաբերութիւնների վրայ:

**ԲԵՍՍԷ ՔԱՊԱՔ. «ՄԵՐ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՅՍՔԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆ ՉԷՆՔ ԿԱՐՈՂ ԵՆԹԱԴՐԵԼ»**

Չէի կարող պատրեկացնել, որ մեր նկատմամբ այսքան մեծ հետաքրքրութիւն կը լինի: Գնալուց առաջ ցուցակ էինք կազմել, թէ պատուիրակութեան անդամներից ով որ գիւղից է: Ենթադրում էինք, որ նման խնդրի կը բախուենք: Օրինակ՝ այնտեղ իւրաքանչիւրը, ով գալիս էր, հարցնում էր, թէ իմբում իրենց գիւղից ինչ որ մէկը կայ, թէ ոչ: Գալիս էին յոյսով, որ կը գտնեն իրենց բարեկամներին, որոնցից մինչեւ այսօր լուր չունէին:

Սասունցու համար ամենաթանկարժէք նուէրը ո՛չ ոսկին է, ո՛չ էլ արծաթը, այլ երկրի քարը, հողն ու լեռներում աճող ծաղիկն է: Սա իմանալով հանդերձ, երբ որ մասնակցեցինք Մարութա լեռան ուխտագնացութեանը, հայաստանցի սասունցիների համար լեռան գագաթին աճող միւռնոնի ծաղիկներից փոքրիկ մի փունջ հաւաքեցի, վերցրեցի նաեւ մի քիչ հող, փոքրիկ քարեր ու եկեղեցու ներսից շաղախի փոքրիկ կտորներ: Հաւատք կայ, որ պահպանում է վատ բաներից: Բացման արարողութեան ժամանակ Թուրքիայից եկած 300 հոգանոց Սասունի խմբին տեսած սասունցիների հետ հանդիպելիս հետս բերած նուէրները չհերիքեցին: Ոմանք ասում էին. «Համահայկական խաղերի բացմանը սասունցիներին տեսնելով՝ չկարողացայ հաւատալ, ծնկներս դողացին», ոմանք էլ՝ «15 րոպէ արցունքներս չէի կարողանում գսպել»:

**ՍԱՍՈՒՆՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ. «ՄԵՁ ՀԱՄԱՐ ԱՄԷՆՈՒՐ ՍԱՍՈՒՆ Է»**

Ձեքի Քափ.- երբ ասում էինք, թէ սասունցի ենք, ոչ մի



**Նկարի աջին՝ վերելք, Սասնոյ պատուիրակութեան պետը Գալստապի Սերժ Սարգսեանէն կը ստանձնէ յատուկ յուշանուէր:**

առարկութիւն չէր լինում, մարդիկ կարծես մեր մէջ իրենց մի մասն էին գտնում: Բացման արարողութեան ժամանակ, երբ որ յայտարարեցին Սասունի անունը, սարսափելի աղմուկ բարձրացաւ, կարծես ողջ մարզահամալիրը վերակենդանացաւ: Խաղերից յետոյ շատ հաճելի ժամանակ անցկացրեցինք: Գիւղերում շատ ջերմ ընդունեցին: Այնքան շատ Սասունից տեսանք, որ սկսեցինք ասել. «Մեզ համար ամէնուր Սասուն է»:

Երլմագ Քըր.- Սրանից առաջ մասնակցել եմ համահայկական բոլոր խաղերին, սակայն այս տարի մնացած տարիներից շատ տարբեր էր: Սասունի անուամբ եւ համագգեստով այնտեղ գտնուելն ընդհանրապէս ուրիշ զգացումներ առաջացրեց իմ մէջ: Գտայ իմ բարեկամներին, որոնց հետ նախկինում նամակագրական կապ էինք հաստատել, սակայն երբեք չէի տեսել: Մեզ հիւրընկալեցին իրենց տներում, զրուցեցինք, արտասուեցինք, երգեցինք: Դրանք այնքան գեղեցիկ պահեր էին, որ բառերով չես կարող արտայայտել:

Արաս Բաղ.- Գիտէինք, որ գնում ենք այնտեղ մեծ անձնագոհութեան շնորհիւ: Նաեւ գիտէինք «Սասուն»ի անուամբ այնտեղ լինելու պատասխանատուութիւնը: Մեր բոլոր մրցախաղերն անցնում էին լի տրիբունաներով: Դհու-գուռնայի ձայների պատճառով չկարողացանք հանդիպումներին կենտրոնանալ: Մեր ընկերներից ոմանք թուլութիւն ունեն դհու-գուռնայի ձայնի նկատմամբ. լսելուն պէս ուսերն սկսում էին շարժել: Երբ կոլ էինք խփում, կամ մեզ էին կոլ խփում, գուռնա-դհուրը հնչում էր: Կարծում եմ, որ մրցախաղին երանգ տուեցինք ու հետք թողեցինք:

Եղուարդ Յամբարձումեան.- Հաւանաբար խմբի ամենաանյաջողակ մարզիկը ես էի: Առաջին հանդիպման ժամանակ կողոսկրերիցս մէկը ջարդուեց: Մեր մէջ շատ լաւ ընկերական միջնորդ էր: Ցանկանում եմ ակնդիրներին շնորհակալութիւն յայտնել աջակցութեան համար: Երբ որ դժուարանում էինք, մեզ ուժ էին տալիս, նրանց աջակցութեամբ յաղթեցինք այն խաղերը, որոնք չէինք կարող յաղթել: Հանդիպումներից յետոյ գնացինք Ծիծեռնակաբերդ Ցեղասպա-

նութեան յուշահամալիր, այցելեցինք Սարգարապատ, էջմիածին: Շատ յուզուեցինք, շատ երջանիկ էինք:

Արման Թաշ.- Բացմանը քայլելն ու այդ մարզահամալիրում լինելն ինձ անհաւատալի երջանկութիւն պարզեց: Սիրտս շատ արագ էր խփում, մի բան էր, որ չէի ապրել, ու անհասկանալի էր... Տարբեր փորձ ունեցանք, օրինակ՝ սեւամորթ հայի հետ ծանօթացանք: Էսկիշեհիրցի ծերունի հայր, ում հետ ծանօթացել էինք Կիրակի օրը, երբ իմացաւ, որ սասունցի ենք եւ եկել ենք Թուրքիայից, չկարողացաւ արցունքները պահել: Մեզ հետ խօսալիս երջանիկ էր, միասին նկարեցինք: Ես շատ յուզուեցի, երբ տեսայ մարդկանց կարօտը հայրենիքի հանդէպ:

**ՂԱԶԱՐՈՍ ՅՈՒՆԱՆ. «ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՆԱԼՈՎ ԸՆԴԱՅՆՒՈՒՄ ԵՆ»**

Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտէն մեզ ասաց, որ թիմը, որն ամենալաւը ներկայացրեց իր քաղաքը, Ստամբուլի թիմն էր: Սակայն քանի որ 2007 թ. էլ էինք նոյն արդիւնքը ցոյց տուել, որպէսզի իրար վրայ երկու անգամ նոյն մրցանակը նոյն քաղաքին չտրուի, այս անգամ մրցանակը տուեցին Արգենտինային: Սասունի թիմի նկատմամբ յատուկ ուշադրութիւն կար: Բնականաբար, մենք էլ էինք գոհ Սասունի մասնակցութիւնից: Բացման եւ փակման արարողութիւնը շատ հիանալի էր: Բոլոր մարզիկների ու մասնակիցների համար յատուկ ճաշկերոյթ տրուեց: Երկու ճաշկե-

րոյթին էլ նախագահ Սերժ Սարգսեանն ու բազմաթիւ նախարարներ եկան: Մթնոլորտը շատ գեղեցիկ էր: Մարզիկները շատ արագ մտերմացան: Նախորդ խաղերին հանդիպումների ժամանակ մանր-մունր վիճաբանութիւններ էին լինում, սակայն այս տարի նման բան տեղի չունեցաւ: Նոյնիսկ խաղերից յետոյ բոլոր մարզիկներն իրենց մարզական շապիկները նուիրում էին հակառակորդ թիմի ընկերներին: Համահայկական խաղերն ամէն տարի աւելի լաւ են անցնում: Այս տարի կազմակերպչական աշխատանքների մասնակցել է 1700 կամաւոր: Բաւականին յաջող կազմակերպչական աշխատանքներ էին, ոչ մի թերութիւն չկար:

**ԿԱՐՊԻՍ ԶԱՓՔԱՆ. «ՄԵՐ ԵՐԱԶԱՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑԱԻ»**

Այնտեղ գնացինք որպէս «Մարալ» երգ ու պարի համոյթի պատուիրակութիւն՝ մօտ 45 հոգանոց խմբով: Ելոյթ ունեցանք եւ բացման, եւ փակման արարողութեան ժամանակ: Օգոստոսի 16ին Օպերային թատրոնում կայացած մեր համերգին մեծ մասնակցութիւն ցուցաբերեցին: Հրաւիրեալների շարքում էին այնպիսի յայտնի անուններ, ինչպիսիք են Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանն ու յայտնի երաժիշտ Արա Գէորգեանը: Մէկ ու կէս ժամ տեւած ելոյթից յետոյ ես ու կինս՝ Իրիս Զափքան, Հրանոյշ Յակոբեանի կողմից պարգեւատրուեցինք: Մեզ համար Օպերայի շէնքում ելոյթ ունենալը երազանք էր, մեր երազանքն իրականացաւ: Երեխաներն էլ են շատ ուրախ, որ այս փորձն ունեցան:




- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Yerevan**  
32-38, Hanrabedoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

**Reservations**



[www.europehotel.am](http://www.europehotel.am)

Studio/CKEN 2005 P&GS





# Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ ՄԱՐՄՆԱԿՐԹ-ԱՆՔ ԵՒ ՈԳԻ

## Ժիրայր Չոլաքեան ՓԱՐԻՉ

«**Բ**արձրացիր-բարձրացուր» բազմանշանակ բնաբանն է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան- Հ.Մ.Ը.Մ-ի ըսկառուտներուն, արիներուն: Զանազան տարիքի տղաք եւ աղջիկներ, 7էն 16 տարեկան՝ Գայլիկ, Արծուիկ, Արի, Արենոյշ, ամէն կիրակի կը հաւաքուին Մխիթարեաններու Սեւրի վարժարանը՝ ապրելու համայնական պահ մը, հայկականութեամբ դրոշմուած: Հանրակարգ մը կը շրջագայի հայահոծ շրջաններու մանուկներն ու պատանիները հաւաքելու: Զորսհինգ ժամուան ընթացքին Հ.Մ.Ը.Մ-ի մարմնակրթական ընտանիքը կը կազմակերպէ բազմաբնոյթ գործունէութիւն՝ մարզական խաղեր, երգ, հայերէնի ուսուցում, միասնական ճաշ, զբօսանք, դրօշակի արարողութիւն, արշաւներ, լող: Կամ ուրիշ առիթներով՝ Հայ Դատի կամ Մեծ Եղեռնին նուիրուած ոգեկոչումներու մասնակցութիւն:

Ուրախալի է, ոգեւորիչ, երբ Հ.Մ.Ը.Մ-ի սկառուտներ, համագգեստով, կարգապահ կը ներկայանան պաշտօնական հանդիսութեան մը, յուշակոթողի մը բացումին, ոգեկոչումի մը արարողութեան: Պատուոյ ընդունելութեան կու տան փայլ: Կը կազմեն պաշտպանական շղթայ մը, կը հանդի-

Յ.Մ.Ը.Մ.ի ու յատկապէս «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս»ի առաքելութեան եւ գործունէութեան անդրադարձող ուշագրաւ ակնարկ մըն է ստորեւ տըրլած գրութիւնը, որ ժիրայր Չոլաքեանի ստորագրութեամբ տեղ գրտած է «Նոյեան Տապան»ի 26 Նոյեմբեր 2011ի հաղորդումներուն մէջ:

սանան դրօշակակիրը Եռագոյնին: Կը շեփորեն փառերգեր, կը թմբկահարեն համախմբումի կոչեր, պաշտօնական ճառերու ունկնդրութեան ծանրութիւնը մարսելի կը դարձնեն:

Հ.Մ.Ը.Մ-ը Ֆրանսայի համայնքային կեանքին մէջ մշտական ներկայութիւն է: Քիչ կը խօսուի իր մասին: Քիչ կը գրուի: Քիչ կը ներկայացուի անոր գործունէութեան ծաւալը, անոր զանազան ծախքերը: Ղեկավարներու սակաւախօսութիւնը թերացում մը չէ, այլ՝ գործնականութեան նշան, բարոյական կեցուածք: Անդրանիկ Պահարեան՝ «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս»ի ներկայատենապետը, ակնածանքով կը խօսի

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրներուն մասին, իր վարիչներուն, իր խմբապետներուն մասին: Անոր արտայայտութիւններուն



եսին զգալի են նուիրումի ու պատասխանատու թեան զգացումը, մեծերէն, հիներէն, նորերուն փոխանցում՝ յիշատակելի, պահպանելի դաստիարակելի արժէքներ, որոնց համար համոզումով կը պայքարի: Հ.Մ.-Ը.Մ.-ականներուն յատուկ է եղբայրութիւնը: Զիրար կը կոչեն «եղբայր» կամ «քոյր», այն ինչ կուսակցականներու մօտ «ընկեր» է կամ «ընկերուհի»:

«Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանս» հիմնուած է 1977ին, Միջին Արեւելքէն Փարիզ հաստատուած խումբ մը նախկին սկաուտներով, Սուրէն Մուրատեանի նախաձեռնութեամբ եւ առաջնորդութեամբ: Շուտով կը կազմուին ֆութպոլի եւ պասքէթպոլի խումբեր: Վալանսի եւ Մարսէլի մէջ ալ կը բացուին մասնաճիւղեր:

Հ.Մ.-Ը.Մ.-ը մարմնակրթական կառոյց է: Մանուկներուն, պատանիներուն եւ երիտասարդներուն համար գրաւիչ ու կենսական գործունէութիւն է մարմնակրթութիւնը: Սակայն, Հ.Մ.-Ը.Մ.- սովորական, ընթացիկ, մարզականէն անդին գացող կազմակերպութիւն է: Կը հետապնդէ ազգային դաստիարակչական տեսլական մը, ուր մարմնի կրթութիւնն ու ազգային գիտակցութիւնը ընդելուզուած են: Հայրենասիրութիւն, լեզու, երգ ու խաղ, հաւաքական ոգի, անոր կու տան կրթականի բոլոր ստորոգութիւնները: Մարմնակրթութիւն, խմբային վարժութիւններ, բանակում, արշաւներ, ընտանեկան փափուկ միջավայրէն հեռու՝ կը մարզեն մարմինն ու հոգին, դիմանալու, ինքնավար դառնալու, դիմագրաւելու աննպաստ պայմաններ, կը ստեղծեն եղբայրական միջավայր, իրերօգնութեան ու փոխհասկացողութեան արժէքաւոր ու յիշատակելի պահեր:

«Հ.Մ.-Ը.Մ.-Ֆրանս», սկաուտական կիրակնօրեայ գործունէութեան կողքին, շաբթուան մէջ կը կազմակերպէ նաեւ մարզիկներուն համար մարզական խումբերու փորձեր: Անոր



ֆութպոլի եւ պասքէթի խումբերը կը մասնակցին ֆրանսական ազգային մրցաշարքերուն: Ունի իր շեփորախումբը, զոր կը ղեկավարէ Եղուարդ Բարսեղեան: Պարահանդէս, «Սկաուտի օր», ուրախ երեկոյթներ, համահայկական մրցաշարքերու կազմակերպութիւն մաս կը կազմեն անոր տարեկան ընդհանուր ծրագիրին:

Պատմականօրէն Հ.Մ.-Ը.Մ.- ստեղծուած է 1918ին, առաջին համաշխարհային պատերազմի աւարտին: Անապաստան, վիրաւոր, կարիքաւոր տարագիրներուն օգնութեան հասնելու մարդասիրական ու հայրենասիրական զգացումները չէին պակսեր: Սակայն, հարկ էր պատանիներուն մօտ, մատղաշ տարիքին, ստեղծել պայմանները՝ չվհատելու, ինքնապաշտպանուելու, պայքարելու՝ բնութեան անկանխատեսելի, ճակատագրի անփառունակ, մարդկութեան անգուժ վերաբերումին դիմաց: Եւ աւելի պատեհ ինչ պայմաններ կարելի է որոնել քան՝ ուրիշին կարեկից ըլլալը, անոր ցաւը թեթեւցնելը, օգնութեան ձեռք մեկնելը, զանոնք հոգեպէս պատրաստելը, գինելը՝ դիմագրաւելու համար կեանքի դժուար պայմանները, այս բոլորը ագուցելով մարմնակրթանքին: Հ.Մ.-Ը.Մ.-ականներու «եղբայր»ութիւնը ծնունդ առած է 1918ին. ան օգնելու, ծառայելու ոգիին արտայայտութիւնն է:



Հիմնադիրները եղած են Շաւարշ Բրիտեան, Գրիգոր Յակոբեան, Յովհաննէս Հինդլեան: Այսօր, աշխարհի տարածքին, Հ.Մ.-Ը.Մ.-ունի 103 մասնաճիւղ, հինգ ցամաքամասներու վրայ կը հաշուէ 26.000 անդամ:

Հայաստանի անկախութեամբ ստեղծուած է Հայաստանի Հ.Մ.-Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.-ը, որ իբր անկախ երկրի մասնաճիւղ կ'անդամակցի Միջազգային Սկաուտական Շարժումին:

Պէտք ունի մէջ, ուր կը գտնուի Հ.Մ.-Ը.Մ.-ի կեդրոնական Վարչութեան նստավայրը, կը հրատարակուի «Մարգիկ» հանդէսը, որ միութեան պաշտօնաթերթն է միաժամանակ:

# ԻՆՔՆԱԿՈՉ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆ

Ժիրայր Սարգիսեան  
ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՕ

**Մ**եր ընթացիկ առօրեային մէջ, երբեմն կը յայտնուին երեւոյթներ, որոնք մեր ուշադրութիւնը գրաւելով, մեզ կը հրաւիրեն ստուգելու, խորանալու եւ վերլուծումներու ճամբով անոնց ներքին տրամաբանութիւնը ըմբռնելու եւ մղիչ ուժը յայտնաբերելու վիճակին:

Տասներեք տարեկան Շանթ Քիլիճեանը մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի սկստական կազմին, Հ.Ե.Դաշնակցութեան (ԱԿԲ), նաեւ՝ Գոուզեան-Չաքարեան-Վասպուրական Ազգային վարժարանի աւարտական ծրու դասարանին, ուր կ'աշակերտեն նաեւ ազգային հերոս Սողոմոն Թեհլիրեանի եղբոր երկու փոքր թոռները:

Շանթ ծանօթ ըլլալով Սողոմոն Թեհլիրեանի սխրագործութեան եւ մեր ազգային պատմութեան մէջ իր ունեցած մեծ արժէքին, յայտնապէս հմայուած ըլլալով անով, առիթով մը, երբ ընտանեօք բոլորուած է ընթրիքի սեղանի մը շուրջ, իր մտահոգութիւնը կ'արտայայտէ անգլիախօս Թեհլիրեան փոքր քոյրերու հայերէն լեզուին անծանօթ ըլլալուն համար, զոր Թեհլիրեան ազգանունին հետ խոտոր հանդիսացող երեւոյթ մը կը նկատէ եւ շեշտակիօրէն իր ծնողքին կ'ըսէ. «Կարելի՞ չէ Թեհլիրեան կոչուիլ եւ հայերէն չկարենալ խօսիլ»:


Ըստ երեւոյթին, երեւոյթը ազգային արժանապատուութեան հարց նկատելով, Շանթ հաստատ համոզումով իր

որոշումը կը յայտնէ, ըսելով թէ՛ «Ես պիտի օգնեմ իրենց, դասապահներէն ետք հայերէն լեզու սորվեցնելու»: Այսպէսով, շաբաթ մը ետք, ծնողքին քաջալերանքով կը սկսի իր ինքնակոչ առաքելութեան:

Ահաւասիկ, հոս կը կայանայ մեր կեանքին մէջ գործող, ազգային շունչ ներարկող կազմակերպութիւններուն, հայ դպրոցին եւ ծնողքին անփոխարինելի դերը, դաստիարակութեան ճամբով փոխանցելու եւ այդ ոգիով մեր նոր սերունդին ինքնութիւնը կերտելու:

Սիրելի Շանթ, այո՛, հայ լեզուն ու մշակոյթը անխորտակելի վահանն են մեր ազգին գոյատեւման, եւ դուն ու նմաններդ պահակներն էք այդ թանկագին ժառանգութեան: Ո՛չ մէկ հայ մանուկ պէտք է զրկուի իր մայր լեզուէն:

Մեր բիւրաւոր նահատակներուն վրէժը լուծող, քու եւ բոլորիս հիացումին եւ երախտագիտութեան արժանի հերոսն է Սողոմոն Թեհլիրեանը, իսկ դուք ալ ապրող սերունդներու հոգին ջերմացնող եւ վաղուան մեր յոյսերը վառ պահող արժանի սերունդն էք: Շատ ապրի՛ք:



## «ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի 10րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին որոշումով, վերահաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրութիւնը: «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 300 տոլար եւ աւելի կը նուիրեն թերթին բարգաւաճման ծրագիրներուն:

«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԼԻԲԱՆԱՆԷՆ Տէր եւ տիկին Գրիգորիս Պողարեան, Նուպար Սոֆեան:

ԱՐԵԻԵԼԵԱՆ Ս. ՆԱՅԱՆԳՆԵՐԷՆ Պետիկ Տէր Վարդանեան:

ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ճորճ Տաքտեան:

# Հ.Մ.Ը.Մ.Ը ՀԻՄՆՈՒԿԾ Է ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ, ՀՆԱԶՁԱՆԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՈՀՈՂՈՒԹԵԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒՄՆ ՎՐԱՅ

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ՀԱԻԱՏԱԻՈՐ  
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ԶԱԻՖՆ ՏԵՐՎԻՇԵԱՆ

Հարցազրույցը վարեց՝ Րաֆֆի Սիլահեան  
ՀԱԼԷՊ

**Կարելի՞ է «Մարզիկ»ի ընթերցողներուն ներկայացնել ձեր կենսագրականը:**

- Ծնած եմ Հալէպ, 1932 թուականին: Նախնական ուսումս ստացած եմ Ազգ. Չաւարեան վարժարանը, որմէ ետք յաճախած եմ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարան: Ճեմարանը աւարտելէ ետք՝ ուղղուեցայ արհեստի: 1963ին պսակուեցայ եւ բախտաւորուեցայ երեք գաւակով՝ երկու աղջիկ, մէկ մանչ:

**Ի՞նչպէս սկիզբ առած է Հ.Մ.Ը.Մ.ականի ձեր կեանքը:**

- Հազիւ եօթը տարեկան էի, 1939 թուականին, հօրեղբայրս՝ Յարութիւն Տէրվիշեանը ձեռքէս բռնելով գիտ տարաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտներուն հաւաքավայրը, որ հետագային կոչուեցաւ «Նաւասարդեան» դաշտ:

Նոյն օրը, ան ինծի համար ապահովեց գայլիկի տարազ եւ ես դարձայ Հ.Մ.Ը.Մ.ի գայլիկ: 1946ին, ներգաղթի օրերուն, փոխանցուեցայ սկաուտական շարքեր:

Սկաուտական շարքերէն ներս ստացայ բոլոր կարգերն ու աստիճանները եւ, իբրեւ տարագաւոր անդամ, վարեցի մասնաճիւղի խմբապետի պաշտօն: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 75ամեակին առիթով ստացայ «Ծառայութեան» շքանշան, իբրեւ երկար տարիներու ծառայող:

**Վարչական ի՞նչ պաշտօններ վարած էք միութենէն ներս:**

- Երկար տարիներ եղած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի եւ Հալէպի մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդի անդամ, ատենադպիրի եւ ատենապետի պաշտօններով: Շրջան մը եղած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան անդամ: Շրջան մըն ալ եղած եմ հալէպահայ միջ-սկաուտական խորհուրդներու անդամ, մինչեւ յիշեալ խորհուրդին լուծումը:

**Իբրեւ մարզանքի ուսուցիչ, ի՞նչ կը փոխանցէք մեզի:**

- Երբ անդամ էի հալէպահայ միջ-սկաուտական խորհուրդին, «Գերմանիկ-Վասպուրական»ի վարչութենէն ստացայ

հրաւեր մը իրենց անդամներուն դասախօսութիւններ տալու եւ սկաուտական մարզանքներ սորվեցնելու համար: Ընթացք տարով իրենց առաջարկին, վեց ամսուան տեւողութեամբ կատարեցինք փորձեր, որոնցմէ ետք՝ Հ.Բ.Ը.Մ.ի սրահին մէջ կատարեցինք ծնողական հանդէս:

Մարզանքի ուսուցիչ եղած եմ Ազգային գանազան վարժարաններէ ներս. Ազգ. Չաւարեան՝ հինգ տարի, Ազգ. Սահակեան՝ երեք տարի, Ազգ. Գերմանիկեան վարժարան՝ աւելի քան տասը տարի: 1974ին, վեց ամսուան տեւողութեամբ, Հայ Աւետարանական Բեթէլ վարժարանէն ներս գործի հրաւիրուեցայ՝ պատրաստելու համար ամառային հանդէսը: Կ'ուզեմ յիշել, որ բոլոր վարժարաններուն մէջ աշխատանքս եղած է անվճար, տնօրէնութիւններու կողմէ գնահատուելով միայն շնորհակալական խօսքերով:

**Երկար տարիներ ծառայած էք նաեւ Հայ Առաքելական Եկեղեցւոյ:**

- Այո, 1942ին, մեծ հօրս առաջնորդութեամբ ուղղուեցայ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի եւ արձանագրուեցայ իբրեւ դպիր: 1949ին մաս կազմեցի Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ դպրաց դասին, ուր դպրութիւնս շարունակելով՝ 1958ին ստացայ ուրար կրելու իրաւունք, Ղեւոնդ Արք. Զեպէյեանի ձեռամբ: 1978 թուականին ստացայ աւագ սարկաւազի կարգ, Սուրէն Արք. Գաթարոյեանի ձեռամբ: 1986ին նշանակուեցայ Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ թաղական խորհուրդի անդամ, իսկ 1989 թուականին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ վարեցի թաղականութեան հաշուա-



պահի եւ գործակատարի պարտականութիւն: 2006ին գործէ դադրելով մէկ տարիով ուղղուեցայ Հայաստան եւ այժմ կեանքս կը շարունակեմ ծննդավայրիս՝ Հալէպի մէջ:

4 Սեպտեմբեր 2004ին ստացայ «Գիր օրհնութեան եւ գնահատանքի» պատուոյ դիրքը, Բերիոյ Թեմի Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեանի ձեռամբ:



**Հ.Մ.Ը.Մ.ական ո՞ր բանակումներուն եւ ժողովներուն բերած էք ձեր մասնակցութիւնը:**

- Իբրեւ գայլիկ եւ սկաուտ, մասնակցութիւնս բերած եմ Հալէպի մասնաճիւղի բոլոր բանակումներուն: Անոնց կողքին, 1950 թուականին մասնակցած եմ Հալէպի եւ Դամասկոսի մասնաճիւղերուն միջեւ կազմակերպուած միջ-մասնաճիւղային բանակումին, որ տեղի ունեցաւ Պլուտանի եւ Եպարուտի մէջ:

1951ին, միջազգային սկաուտապետ լորտ Սըր Ուիլսըն այցելեց Հալէպ, եւ այդ առիթով կազմակերպուեցաւ մէկ շաբթուան բանակում մը Հալէպի հայ եւ արաբ սկաուտներուն մասնակցութեամբ, Թէր Սանթի դպրոցին մէջ: Այդ շրջանին

շակումը:

**Իբրեւ երէց խմբապետ, ի՞նչ խօսք կ'ուղղէք Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ սերունդին:**

- Հ.Մ.Ը.Մ.ը հիմնուած է կարգապահութեան, հնազանդութեան եւ գոհողութեան սկզբունքներուն վրայ, եւ ներկայ

մեր խմբապետն էր եղբ. Լեւոն Պապուզեանը: Բանակումին ընթացքին, երբ սըր Ուիլսըն վրաններու այցելութիւն կատարեց՝ մեր տաղաւարին մօտ տեսաւ Արարատ-Մասիսը, նաեւ՝ մեր շինած կայմ-աշտարակը: Հիացած՝ ան բարձրացաւ կայմին վրայ եւ գնահատեց մեր աշխատանքը: Մինչեւ այսօր կը յիշեմ սըր Ուիլսընի դէմքին արտայայտութիւնները եւ քաջալերական խօսքերը մեզի: 1959 թուականին մասնակցեցայ Եգիպտոսի մէջ մէկ շաբթուան տեւողութեամբ տեղի ունեցած ձեռնարկին:

1982ին մասնակցութիւն բերի Աթէնքի մէջ կատարուած Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային խմբապետական երկրորդ ժողովին, որուն օրակարգի գլխաւոր կէտն էր սկաուտական կանոնագրութեան վերամը-

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

**Saberatours Sevan Voyages**

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY

**Armavia**  
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 StudioVICKEN 2005 PARIS

11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canebière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wasteels.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com	


սերունդը պարտաւոր է հետեւիլ այս սկզբունքներուն: Անդամներուն մօտ հրահանգին հանդէպ «ինչո՞ւ» բառը պէտք է գոյութիւն ունենայ: Նախ հարկ է հրահանգը գործադրել, ապա՝ լուսաբանութիւն պահանջել անոր մասին: Ես կրնամ ըսել, թէ եղած եմ միակ սկաուտը, որ միեւնոյն ժամանակ յա-

ջողած եմ ըլլալ սկաուտ եւ եկեղեցական դպիր, եւ հասած եմ անոնց բարձրագոյն կարգերուն: Կ'ուզեմ որ ներկայ սերունդն ալ ծառայէ Աստուծոյ, ազգին ու հայրենիքին՝ գործադրելու համար անոնց հանդէպ իր կատարած խոստումը:

ԾԱՆՕԹԱՆԱՆՔ

# ԱՆՑԵԱԼԻ ԽՄԲԱՊԵՏՆԵՐԷՆ ԵՂԲ. ԱԼԵՔՍԱՆ ԻՍԿԷՆՏԷՐԵԱՆ


Արմէն Քեօշկերեան  
ՀԱԼԷՊ



Եղբ. Ալեքսան ծնած է Հալէպ, 1931ին: Յաճախած է Ազգ. Կիւլպէնկեան վարժարան, որմէ ետք նետուած է գործի ասպարէզ, որպէս երկաթագործ: Փոքր տա-



րիքէն ան մուտք գործած է Հ.Մ.Ը.Մ-ի շարքեր որպէս գայլիկ սկաուտ, ապա մինչեւ բարձրագոյն աստիճանի խմբապետ: Երկար տարիներ եղած է Հ.Մ.Ը.Մ-ի Սկաուտ-Խորհուրդի անդամ, տեղական վարչական, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ-Խորհուրդի ատենապետ եւ Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ իր ծառայութեան կողքին, եղբ. Ալեքսան երկար շրջան մը ծառայած է Ազգ. Զաւարեան վարժարանին, որպէս հոգաբարձու: Նշանակուած է Բերիոյ Թեմի կալուածոցի հոգաբարձութեան անդամ, նաեւ՝



Ազգ. Ծերանոցի խնամակալ, իսկ մինչեւ օրս կը ծառայէ Բերիոյ Թեմի հաշտեցման մարմինէն ներս:

Եղբ. Ալեքսան միութենական իր ներշնչումը ստացած է եղբ. Նշան Թիւյսիւզեանէն, որուն յիշատակին մեծ յարգանք կը տածէ մինչեւ օրս: Մենք՝ աստիճանաւորներս յաճախ կը վայելէինք եղբ. Ալեքսանին խրատները, թէ՛ պէտք է ազգային դաստիարակութիւն ջամբենք գայլիկ-սկաուտներուն, սահմանուած պատիժները պէտք է ըլլան դաստիարակիչ, որպէսզի դրական արդիւնք ունենան եւ նպատակին ծառայեն:

Եղբ. Ալեքսան ունի կեանքի անսահման փորձառութիւն: Կը սիրէ գործը՝ քան խօսքը: Միութենական կեանքի մէջ ան եղած է պահանջկոտ, ուղղամիտ եւ յանձնառու: Ամենակարեւորը՝ եղբ. Ալեքսան խոր յարգանք եւ հաւատարմութիւն ունեցած է Հ.Մ.Ը.Մ-ի հանդէպ: Հ.Մ.Ը.Մ-ականներ անսահման յարգանք ունին եղբ. Ալեքսանին հանդէպ եւ չեն մոռնար անոր խրատները, որպէս նուիրեալ երէց եղբայր:

1993ին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Միսաք Արզումանեանի ձեռամբ, եղբ. Ալեքսան կը ստանայ Հ.Մ.Ը.Մ-ի «Ծառայութեան» շքանշան:

Մենք միշտ աղօթող ենք եղբ. Ալեքսանին, որպէսզի ան մնայ քաջաոգով եւ շարունակէ իր օգտաշատ ծառայութիւնը՝ յանուն գաղութին բարգաւաճման եւ Հ.Մ.Ը.Մ-ի վերելքին:

# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989)  
ԱՆՏԻՊ, ԻԹ. ՄԱՍ

Մեր ժողովուրդին բարոյական վարկը բարձրացնելու համար ուրիշ միջոցներ եւ ձեռնարկներ դժբախտաբար կը պակսին: Մանաւանդ մեր ներքին աղտոտ պայքարներուն եւ վէճերուն օտար թերթերու մէջ գտած արձագանգը շատ նսեմացուցած է մեր ազգային արժէքները:

«Մարմնակրթական կազմակերպութիւններու ֆիզիքական դաստիարակութեան բերած թանկագին ծառայութիւնները յիշել կամ փաստել աւելորդ է: Հայ երիտասարդին նկարագրին կազմութեան գործին մէջ եւս մարմնակրթանքին ազդեցութիւնն ու դերը մեծ է. անհատական ինքնափստահու-

թեան զարգացման եւ ազգային նկարագրի պահպանման տեսակէտէն կրթարան մըն է մարմնամարզը:

«Այս տեսակէտով չափազանց միեմտարական է տեսնել մարզական կեանքի թափը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Գրեթէ բոլոր հայաշատ քաղաքներու մէջ կազմուած են մարմնակրթական կազմակերպութիւններ, որոնք ոգեւորութեամբ եւ խանդավառութեամբ լեցուցած են մեր նոր սերունդին հոգիները, մանաւանդ Հ.Մ.Ը.Մ-ի կենսաւորումն ու վերջին քանի մը տարուան ընթացքին ունեցած զարգացումը ուրախառիթ փաստ մըն են մեր երիտասարդութեան կենսունակութեան եւ ինքնափստահութեան:

«Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպիչները հոս, մեր շրջանին մէջ, ամէն երաշխաւորութիւն կրնան պարգեւել մեր երիտասարդութեան, որ իրենք հաւատարիմ հետեւորդները այդ մեծ սկզբունքին, պարտաւոր են նուիրուելու այդ կենսունակ կազմակերպութեան ծաւալման գործին:

«Միայն թէ ինչպէս մեր բոլոր ազգային գործերու մէջ, նոյնպէս ալ մարմնակրթական միութիւններուն ներդաշնակ եւ համերաշխ գործունէութիւն մը անհրաժեշտ է նպատակին հասնելու համար:

«Զօրաւորագոյն եւ պատկառազօր կազմակերպութիւն մը դառնալու համար, գանազան անուններու տակ գործող հայ մարզական միութիւնները պէտք է համախմբուին մէկ կազմակերպութեան մէջ:

«Հ.Մ.Ը.Մ-ը իր սկզբունքներով եւ ծրագրով միակ կազմակերպութիւնն է, որուն դրօշին ներքեւ պէտք է հաւաքուին բոլոր միութիւններն ու մարզասէր պատանիները»:

Պաղեստինի աղէտին, Պէյրութի մէջ կազմուած Իսլամական Օգնութեան Մարմնի հրաւերին պատասխանելով, Պէյրութի մասնաճիւղը, կազմակերպուած ողիմպիականին մէջ ստանձնեց իր դերը: Իսկ իր տարեկան 4րդ ողիմպիականը պատրաստ էր տալու 3 նոյեմբեր 1929ին, Ռաս Պէյրութի Ֆրանսական դաշտին վրայ, մասնակցութեան Որբ. Ընդհ. Միութեան նուագախումբին: Օրուան թագուհին է տիկին Թոփճեան, պատուոյ օրիորդներ՝ Ա. Շալվարճեան, Ն. Տամատեան, ընդհանուր դատաւոր՝ սերժան Տեմանժէլ, դաշտի բժիշկներ՝ Ալեքսան Պէզճեան եւ Յակոբ Գասապեան:

Ողիմպիականը կը սկսի նուագախումբին առաջնորդութեամբ՝ մարզիկներու տողանցքով:

Տողանցքին կը յաջորդեն ողիմպիական խաղերը: «...Հետզհետէ տեղի ունեցան գանազան վազքեր ու խաղեր, որոնցմէ ձեռք բերուեցան շատ լաւ արդիւնքներ, կոտորելով նախորդ տարիներու ընթացքին Պէյրութի Հ.Մ.Ը.Մ-ին հաստատած մրցանիշներէն վեցը:



1943-1944. Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի Նորնճաներու խումբը:

«Հանդէսին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Քէլէկեանի սկաուտները, կազմեցին բազմաթիւ գեղեցիկ բուրգեր եւ արժանացան հանդիսականներու գնահատանքին ու բուռն ծափերուն:

«Գովելի էր հանդէսին կազմակերպիչներուն այն աշխատանքը, որով յաջողեցան խաղերու լաւ դասաւորումովը հանդիսականներուն հետաքրքրութիւնը միշտ վառ պահելու ճանապարհը հաճոյքով հետեւեցան հանդէսին բոլոր խաղերուն:

«Օրուան ախոյեան հանդիսացան, փոխանակ մէկի, երեք մարզիկներ՝ Օննիկ Փիլիկեան, Հայկակ Տէր Մանուէլեան, Ծորճ Միսիրեան, որոնք հաւասար կէտեր շահած էին:

«Յանձնախումբը երեքն ալ հաւասար ախոյեան հռչակեց: Փակման խօսքը կատարեց տոբթ. Ալեքսան Պէզճեան, շնորհակալութիւն յայտնելով հանդէսին պատուոյ անդամուհիներուն, ժողովուրդին եւ աշխատողներուն» («Ազդակ», 6 Նոյեմբեր 1929):

Դամասկոսի մասնաճիւղին սկաուտները, գեղեցիկ գաղափարով մը, 22 Սեպտեմբեր 1929ին, տեղական իսլամական «Ղութա» խումբին հետ, Դամասկոսէն տասնչորս քլմ. հեռու, Մասրապալի մէջ, մէկ օրուան բանակում-արշաւ մը կ'ունենան:

«Միեւնոյն օրը անակնկալօրէն Դամասկոս այցելեց նաեւ Լիրանանի յոյն-օրթոտոքս սկաուտական խումբը եւ մասնակցեցաւ այս արշաւանքին» («Ազդակ», Սեպտեմբեր 1929): Ուրեմն, ամբողջ օր մը, երեք խումբերը, սկաուտական դաւանանքի դրօշին ներքեւ, մտերմիկ միմեկուրտ մը ստեղծելով կը վայելեն ազատ բնութիւնը իր բոլոր գեղեցկութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան տասնամեակի տօնակատարութիւնը տօնուեցաւ Պէյրուսի, Չահլէ, Լաթաքիա ու Հալէպ: Իսկ Դամասկոս, թէեւ քիչ մը ուշ, բայց չի մոռնար սարքելու «գեղարուեստական հանդէս-երեկոյթ» մը, նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի տասնամեակին, նախագահութեամբ Գերշ. Խաղ Սրբազանին, 3 Նոյեմբեր 1929ին:

Թրիփոլիի թղթակիցը «Ազդակ»ի 16 Նոյեմբեր 1929ի համարին մէջ կը գրէ նաեւ:

«Կ'արժէ տեղական Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան յարատեւ գործունէութեան մասին ամփոփ տեղեկութիւն տալ: Այսօր, տասը ամիսէ ի վեր, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը անսայթաք կը շարունակէ իր գործունէութիւնը՝ կատարելով ոգեւորութեամբ եւ խանդավառութեամբ: Այս ամառ վարչութիւնը գեղեցիկ գաղափարը յղացած էր մեր արտասահմանեան թերթերու խմբագիրներուն դիմում կատարելու եւ անոնցմէ խնդրելու որ սիրայօթար տրամադրեն իրենց թերթերը իր հաստատելիք ընթերցասրահին: Ուրախ ենք յայտնելու, որ միութեանս դիմումները ապարդիւն չմնացին: Ներկայիս, Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը, որ ընթերցասրահի վերածուած է, կը ստանայ տասը տեսակ հայերէն թերթ, որոնցմէ կ'օգտուին թէ միութեան անդամները եւ թէ հայ հասարակութիւնը»:

1929ին Պէյրուսի կը ժամանէ սկաուտ խմբապետ Արտաւազը Հաճեան: Երջանային վարչութիւնը իրեն կը յանձնէ սկաուտական կազմի վերակազմութիւնն ու անոր դաստիարակութեան հարցը եւ այդ առթիւ կը հրատարակէ հետեւեալ յայտարարութիւնը:

«...Սկաուտիզմը, Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագրի առաջին յօդուածին համաձայն, պատանիին կու տայ Ֆիզիքական առողջ դաստիարակութիւն, կը սորվեցնէ սատարել ցեղին բարոյական եւ իմացական բարձրացման - ըլլալ շարքաշ եւ ժուժկալ, կարգապահ, արթուն եւ արագ, ճիշդ դատող, ձեռներէց, արի, հայրենասէր. անհատին մէջ կը զարգացնէ պարտականութեան եւ պատուի գգացումները եւ համերաշխ ու փոխադարձ օգնութեան ոգին:

«Արդ, սիրելի ծնողներ, որպէս միակ միջոց Ֆիզիքական ու բարոյական դաստիարակութեան, պէտք է կառչիք Հ.Մ.Ը.Մ.ի այդ վսեմ վարդապետութեան:

«Այս ուղղութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Երջանային վարչութիւնը կոչ կ'ընէ գաղութին գիտակից պատանի ու երիտասարդութեան, որ մինչեւ 22 Դեկտեմբեր գան եւ համախմբուին սկաուտական վսեմ դրօշին տակ, որուն ղեկավարութիւնը յանձնուած է քաղաքս նոր ժամանած կարող մասնագէտ խմբապետի մը...» («Ազդակ», 11 Դեկտեմբեր 1929):

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ 24 Դեկտեմբեր 1929ի Կիրակին, Ս. Նշան վարժարանի սրահին մէջ, լսելու վարչութեան ղեկուցումը եւ ընտրելու նոր վարչութիւն:

Հալէպ, հետապնդելով հանդերձ դաշտի խնդրի կարգադրութիւնը, տենդագին կ'աշխատի ներքին կազմակերպչական գործերով: Հ.Մ.Ը.Մ.ի տասնամեակի հանդէսի պատրաստութիւն, ամսավճարներու գանձում, կարգ ու կանոնի խիստ հսկողութիւն «խռովարար»ներու դէմ, ֆուլթայոլի մրցումներու անխափան շարունակում, նոր անդամներու մուտքի դիւրացում, 12 նորնճայ սկաուտներու հարցարան-դիմում-նագիրներու ստացում:

«Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի վարչութիւնը գեղե-



ցիկ գաղափարը յղացած է Մարտ 31ին կազմակերպելու Հալչայ, Պէյրուի Եւ Դամասկոս քոյր մասնաճիւղերու 1929ի տարեկան ախոյեանական մրցումները»: Հալչայի համար նիւթական հարցին լուծումը դժուար էր: Պէյրուի կը խոստանար գոյգ մասնաճիւղերու խումբերուն սնունդն ու պանդոկը հոգալ, իսկ Հալչայ երթեւեկի ծախսին կարիքը ունէր, որով, այս պարագան շեշտուած կերպով Պէյրուի նկատողութեան կը յանձնէ ու հակառակ պարագային կը ծրագրէ «Ֆրանսացիներուն դիմել, որպէսզի դաշտը տրամադրուի ի հաշիւ խումբին: Պէյրուի երթեւեկի ծախսերուն մրցում մը կատարուի» (Ատենագրութիւն 12 Մարտ 1929):

Պուրէշի կեդրոնական Մարմինը Հալչային ալ կը գրէ Հ.Մ.Ը.Մ.ի տասնամեակին առթիւ հրատարակուելիք «Կոթող»ին մասին. պարտականութիւն կը տրուի Միհրան Կարապետեանին «միութեանս հիմնարկութեան եւ գործունէութեան տեղեկատուութիւնը պատրաստել»: Իսկ Լուտեր Մասպանաճեանին պարտականութիւն կը տրուի համաձայնելու դերասան Չափրասի հետ, մասնաճիւղին ի նպաստ ներկայացում մը սարքելու 17 Ապրիլին:

Պէյրուի, Դամասկոս եւ Հալչայ միջ-մասնաճիւղային մրցումներուն, 31 Մարտին, Պէյրուի մէջ, Հալչայ յաղթական ելլելով կը ստանայ Պէյրուեան եղբայրներուն տրամադրած բաժակը:

Հալչայը իբրեւ հիւսիսային Սուրիոյ կեդրոն, ինքնաբերաբար, իր վրայ կեդրոնացած կը գտնէ այդ շրջաններուն մէջ

հաստատուած հայկական փոքր գաղութներու պատանիններուն եւ երիտասարդներուն աչքերը: Ասոր քաջապէս գիտակից Հալչայը, իր 23 Ապրիլի նիստին, կը գրէ Տէր Զօրի եւ Սուէտիոյ «մասնաճիւղերուն կցումը Հալչայի մասնաճիւղին»:

Հ.Մ.Ը.Մ.ի անունը արձագանգած է Սուրիոյ անապատին զանազան մասերը: Առաջին ձայնը կը լսուի հայկական համատարած գերեզմանի խորերէն, Տէր Զօրը խորհրդանիշը կ'ըլլայ Ապրիլեան Եղեռնի Գողգոթային:

Հալչայի մասնաճիւղի 1929 տարեշրջանի անդամական ընդհանուր ժողովը տեղի կ'ունենայ Մայիս 19ին: Ժողովը լսելի վերջ վարչութեան նիւթական եւ բարոյական հաշուետուութիւնը կ'ընտրէ նոր վարչութիւն: Նոր վարչութեան կ'անդամակցին Սուրէն Քալենտէր, Լուտեր Մասպանաճեան, Գեղամ Ազկիւլեան, Ճորճ Միսիրեան, Տիգրան Յովակիմեան, Միհրան Կարապետեան, Փիլիպոս Դերձակեան:

Նորընտիր վարչութիւնը Մայիս 28ի իր նիստին կ'որոշէ «ողիմպիական մը սարքել բոլոր հայ ակումբներու մասնակցութեամբ. նամակով մը հրաւեր ուղղել բոլորին, նամակներուն հետ ղրկելով նաեւ դաշտահանդէսին խաղերու ցանկը եւ կանոնները»: Հրաւերը դրական արդիւնք կու տայ: Վերջնական կարգադրութեան համար կ'որոշուի հսկիչ կարգադիր յանձնախումբ կազմել, բանակին դիմել դաշտի համար ու մարզիկները շրջաբերականով ժողովի հրաւիրել: «Հայ ողիմպիականի» թուականը կ'որոշուի 7 Յուլիս, Կիրակի, կ. Ե. ժամը 4ին, գինուորական դաշտին վրայ: Առ այդ, նամակներ

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

# HOTEL

★ ★ ★

## PAVILLON MONCEAU

### PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com

Studio VIKEN 2005 PARIS



1930. Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի ֆուտբոլի Ա. խումբը:

Արաբունար դիմած էր Հալէպի, Հ.Մ.Ը.Մ.ի Ծրագիր-Կանոնագրի համար: Դիմումին գոհացում կը տրուի 27 Հոկտեմբեր 1929ին: Արաբունար Ծրագիր-Կանոնագիրը առնելէ ետք, 12 Դեկտեմբեր 1929 թուակիր նամակով, ուղղուած Հալէպին կը գրէ-

«Նոյնութեամբ ընդօրինակելով այս Ծրագիր-Կանոնագիրը ձեզ կը վերադարձնենք. խոստանալով լրիւ գործադրել անոր մէջ պարունակած հրահանգները:

Անշուշտ,- կը շարունակէ նամակը,- դուք ալ անտես չէք թողուր մեր այս նորակազմ միութիւնը, որը տակաւին ձեր աջակցութեան կը կարօտի: Յարգալից բարեւներով մնանք միշտ ձեր հրահանգներուն սպասող՝

Ա. դպիր                      Ա. պետ  
Մոմճեան                      Յ. Սէֆէրեան

կը գրուին մասնակցող միութիւններուն՝ ողիմպիականի թուականին, վերջնական նիստին ու ֆորմաներուն համար:

Ողիմպիականի դատական յանձնախումբին մաս կազմելու համար հրաւէր կ'ուղղուի Քէփթըն տոքթ. Ալթունեանին, Շորօղլուեանին, Հէքիմեանին, Հալէնտէրին, Ագկիւլեանին, Սէթեանին, Սահակեանին ու Պզտիկեանին: Ողիմպիականին համար կ'որոշուի բերել Դամիի նուագախումբը:

Միեւնոյն ատեն վարչութիւնը ընթացք տալով սկսուածներու դիմումին, թոյլատու կ'ըլլայ անոնց բանակումին՝ «Իրենց տրամադրելով միութեանս գանձէն մինչեւ երկու օսմ. ոսկի, թեթեւցուցած ըլլալու համար իրենց վրայ ինկած ծախքը»:

Սկսուածներ կը հասնին Ճեպէլ Մուսա. այս բանակումին մասին «Ազգակ»ի թղթակիցը կը գրէ.

«...Վերջերս հոս եկան նաեւ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի արիւնքը, որոնց ներկայութիւնն ու կատարած պտոյտները խանդավառութիւն յառաջ բերին ամբողջ Սուէտիոյ շրջանի հայ հասարակութեան ու պատանեկութեան մէջ... Աւելին, Պիթիաս կ'այցելէ Բ. Գոմիսէրութեան Ալէքսանտրէթի պատուիրակին փոխանորդը- գիւղին երեւելիները, դպրոցներու աշակերտութիւնը, առաջնորդութեամբ Հալէպի Հ.Մ.Ը.Մ.ի արիւնքուն, գիւղին մուտքին (14 Սեպտեմբեր, 1929) դիմաւորելու կ'ելլեն հիւրը:

Դաշտի մը ի խնդիր, երկար փնտռուութիւն եւ երկար աշխատանքէ ետք, հրեաներու գերեզմանատան մօտակայ դաշտը կը վարձուի տարեկան 19 օսմ. ոսկիով, երեք տարուան պայմանաժամով եւ կ'որոշուի «Սեպտեմբեր 27ին, Կիրակի, բոլոր անդամներով նոր դաշտը գտնուիլ ու յարգարումի աշխատանքներուն ձեռնարկել»:

Հիւսիսային Սուրիոյ, Ճեզիրէի շրջանէն,

Հալէպի մասնաճիւղին նոր դաշտին յարգարումը այնքան որքան անդամներու ձեռքով կարելի է ընել, կը կատարուի, իսկ մնացածին համար կը հանգանակուի 3745 դրուշ: Այս գումարով կը գնուին երկաթ փշաթելեր: Այս փշաթելերը քաշելու համար կ'որոշուի «Յայտարարութիւն մը ընել, որ Կիրակի բոլոր անդամները դաշտին վրայ ներկայ գտնուին»:

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, որ ընտրուած է 1929 Ապրիլ 1ին գումարուած առաջին Պատգամաւորական Ժողովէն, իր վարչական առաջին նիստը կը գումարէ 17 Յունուար 1930ին: Այս յապաղումը անոր համար, որ ընտրուած վարչականներէն ոմանց քաղաքէն մեկնումէն ետք, անոնց տեղ ուրիշներուն նշանակումը «ցարդ չէր կրցած կազմուիլ այլեւայլ պատճառներով»:

Շրջանային Վարչութեան առաջին նիստին իսկ, նամակներ կը խմբագրուին բոլոր մասնաճիւղերուն՝ Պէյրութ, Դամասկոս, Լաթաքիա, Թրիփոլի, Չահլէ, որպէսզի իրենց վար-



1930, Դամասկոս. Հ.Մ.Ը.Մ.ականներ իրենց առաջին արշաւը կը կատարեն Չատկուան տօնակատարութեան առիթով:

չական կազմերը ներկայացնեն վաւերացուելու համար: Եւ որպէսզի Շրջանային Վարչութիւնը հիմնական քայլեր առնէր շրջանի կազմակերպչական գործին մէջ, 15 Մարտ 1930 թուակիր նամակով կը գրէ. «Ներկայիս վարչութիւնս ժամանակը հասած կը նկատէ զբաղելու շրջանս կազմակերպելու գործով ու գծելու մէկ ուղղութիւն բոլոր մասնաճիւղերուն համար: Սակայն, նախքան այդ, կ'ուզէինք գիտնալ ցարդ իւրաքանչիւր մասնաճիւղի ունեցած գործունէութիւնը, որով Շրջանային Վարչութիւնը մասնաճիւղերուն կը յղէ հետեւեալ հարցարանը.

**Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ**

1. Ի՞նչ է մասնաճիւղիդ անդամներուն թիւը:
2. Ի՞նչ է անդամներուն առաւելագոյն եւ նուազագոյն ամսավճարը:
3. Գանձումի ի՞նչ ձեւ կը կ'իրակէք՝ որքա՞ն ծախք կ'ըլլայ:
4. Զեր տոմարները ի՞նչ ձեւով կը բռնուին:
5. Ծախքի համար ստացագիր կը պահանջէ՞ք:
6. Զեր ներկայ նիւթական կացութիւնը ի՞նչ է - որքա՞ն պարտք, պահանջք կամ պատրաստ դրամ ունիք:

**Բ. ՍԿԱՈՒՏԱԿԱՆ**

1. Որքա՞ն սկաուտ ունիք 11-18 տարեկան:
2. Որքա՞ն գայլիկ ունիք 6-10 տարեկան:
3. Խմբապետներ կամ խմբապետուհիներ ունի՞ք 20-25 տարեկան:
4. Մարզական կամ սկաուտական դասախօսութիւններ ունեցա՞ծ էք եւ ի՞նչ ուղղութեամբ:

**Գ. ՄԱՐԶԱԿԱՆ**

1. Քանի՞ մարզիկ ունիք եւ ի՞նչ խաղերու կը մասնակցին:
2. Մարզական ի՞նչ աշխատանք տարիք վերջին տարուան ընթացքին:
3. Մարզական դասաւանդութիւններ եւ փորձեր կը կատարուի՞ն, որո՞ւ կողմէ:
4. Ուրիշ ի՞նչ խաղեր կամ՝ այդ ուղղութեամբ ծրագիր ունիք:

**Դ. ՅՈՒԹՊՈԼ**

1. Կազմակերպուած եւ խաղացող քանի՞ խումբեր ունիք:
  2. Խումբերուն թիւը աւելցնելու կարելիութիւն կա՞յ:
  3. Խումբերը յաճախակի փորձեր եւ մրցումներ կ'ունենա՞ն:
  4. Մասնաւոր դաշտ, ակումբ ունի՞ք:
- Շրջանային Վարչութիւնը Հայէպէն կը ստանար 16 Փետրուար 1930ի վարչութեան նորընտիր կազմի վաւերացման նամակը: Վարչութեան մաս կը կազմեն Լուտեր Մասպանաձեան, Փիլիպոս Դերձակեան, Խորէն Հելվաճեան, Տիգրան Յովակիմեան, Զարեհ Ճերահեան, Կարապետ Զիչէքեան եւ Միհրան Կարապետեան:

(Շար. 29)

**ՆՇՄԱՐ**

**ՇՆՈՐՀԱԿԱՎՈՒԹԻՒՆ,  
ԲԱՅՅ... ՈՉ**

**Գրիգորիս Պողարեան  
ՊԵՅՐՈՒԹ**

«Մեր հայրենիք», «Մշակ բանուոր», «Յառաջ նահատակ», «Կիլիկիա»... քայլերգ, այլեւ օրհներգ բնութագրութեան արժանացած են եւ հաւաքական մեր կեանքէն ներս գրաւած են մասնայատուկ այնպիսի տեղ մը, որ ե՛ւ հպարտութիւն, ե՛ւ պատկառանք, ե՛ւ ակնածանք ու զգաստութիւն կը պարտադրեն, մանաւանդ երբ իւրաքանչիւրը կը մատուցուի պատշաճ առիթով, յարմար վայրի մէջ եւ հարազատ ոճով: Դժբախտաբար, սակայն, վերոյիշեալներէն երկուքը, որոնք ոչ միայն համահայկական են իրենց աղերսով, այլեւ՝ առաւելաբար սրբազնաբարոյ եւ վերացնող են, վերջերս յաճախ կը հնչեն տեղի-անտեղի, աղաւաղուած, մինչեւ իսկ անձանաչելի տարբերակներով, միախառնուած դգալ-պատառաբաղի եւ կողմնակի խօսակցութեանց առթած աղմուկին:

Յարգելի տիկնայք եւ պարոնայք, շատ պիտի խնդրենք, որ զբօսավայրերէ ներս ձեր կատարումներու սկզբնաւորութենէն զերծ պահէք «Մեր հայրենիք»ը եւ ձեր երգացանկէն դուրս բերէք «Կիլիկիա»ն: Արեան գնով ձեռք բերուած անկախութիւնը խորհրդանշող օրհներգը եւ կորսուած հողերն ու միլիոնաւոր զոհերը յուշող «Կիլիկիա»ն խունկ պէտք է բուրեն եւ ոչ թէ օղի, շարական պէտք է յիշեցնեն եւ ոչ թէ «շարխը»: Այո, շնորհակալ ենք որ տակաւին կը հնչեցնէք բոլորիս սիրելի քայլերգները, բայց... ոչ իսկ դոյզն շնորհակալութիւն, երբ ձեր կատարողութեան արդիւնքը համազօր է անգամ մը եւս արիւնելու մեր հոգիները եւ սրբապղծելու աղօթք դարձած մեր երգերը:

**«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ**

● Եղբ. Վարդգէս Զայրապետեանի մահուան առիթով, տէր եւ տիկին Միհրան Շիմշիրեան 50 \$



# «ՉԵՄՓԻՐՆՁ ԼԻԿ»Ի Բ. ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ՄԵՄԻՆ

## Գ. Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**«Չ**եմփիրնձ Լիկ»ի մասնակից երեսուն երկու խումբերը ութը խմբակներու բաժնուկով, 13 Սեպտեմբերէն 7 Դեկտեմբեր 2011, բուն պայքար մղեցին գրաւելու համար իրենց խմբակին առաջին երկու դիրքերէն մէկը եւ բաժակին տիրանալու իրենց պայքարը շարունակելու յաջորդ հանգրուաններուն:

Խմբակներու վիճակաձգութիւնը ստեղծած էր համեմատաբար հաւասար պայքարի կարելիութիւն բոլոր խումբերուն համար: Եթէ գանց առնենք Ա. խմբակը, որ կը նկատուէր ամէնէն դժուարն ու ամէնէն անորոշը, մնացեալ խմբակներու մէջ որոշ խումբերու գերակայութիւնը պարզ էր եւ յաջորդ հանգրուանի մասնակցութիւնը գրեթէ ապահովուած:

**Ա. խմբակին** մէջ կը տիրէր անորոշ վիճակ: Մանչեսթրը Սիթի, Պալէրն Միլնիթս, Վիլարէալ եւ Նափոլի յամառ պայքար պիտի մղէին: Մանչեսթրը Սիթի «գերհզօր» խումբի պատրաստութիւններ տեսած է եւ Անգլիոյ ախոյեանութեան մէջ սուր մրցակցութեան մէջ է տիտղոսին տիրանալու համար: Պալէրն Միլնիթս արդէն իսկ բազմած է Գերմանիոյ ախոյեանութեան առաջին դիրքին: Նափոլի դրական ձեւով սկսաւ Իտալիոյ ախոյեանութիւնը: Միայն Վիլարէալն է, որ Սպանիոյ ախոյեանութեան ոչ-համոզիչ արդիւնքներ կ'արձանագրէ: Ահաւասիկ այս չորսը պայքարեցան խմբակին առաջին երկու դիրքերուն համար: Խմբակի մրցումներու ծիրէն ներս, Նափոլի յաջողեցաւ Սիթիի «հզօրութիւնը» կոտորել եւ Պալէրն Միլնիթսի հետ անցաւ Բ. հանգրուան: Վիլարէալ ունեցաւ լուսանցքային դեր:

**Բ. խմբակին** մէջ, ինթէր Միլան եւ Սէ-էս-Քա-Մոսկուա

գերազանցեցին Տրապիզոնսփորն ու Լիլը: Ինթէրի համար տարեշրջանը այնքան ալ փայլուն չսկսաւ: Ան իր առաջին մրցումին պարտութիւն կրեց Թուրքիոյ ներկայացուցիչէն: Մինչ Ֆրանսայի ախոյեան Լիլը չկարողացաւ յաղթել ռուսական կազմին: Իտալացիք եւ ռուսերը աւելի վճռական եղան յաջորդ հանգրուաններուն: Ֆրանսացիք չունէին անցեալ տարուան իրենց փայլքը: Մինչ Թուրքերը չյաջողեցան իրենց անախորժ անակնկալները շարունակել:

**Գ. խմբակին** թեկնածուները կը նկատուէին Մանչեսթրը Եունայթըտ եւ Պենֆիլա: Պասէլ եւ Ճելաթի դժուար թէ կարենային առաջին երկուքին հաշիւները խանգարել: Եունայթըտ առաջին մրցումին հաւասարեցաւ Պենֆիլայի մէջ, իսկ Անգլիոյ մէջ ան անսխալ կ'ընթանայ դէպի նոր տիտղոս: Պենֆիլա բաւական զօրաւոր կազմ մը ունի եւ պատրաստ է յաջորդ հանգրուանի մրցակցութեան: Չուիցերիացիք սակայն անակնկալներ ստեղծեցին եւ Եունայթըտ գլխիկոր հեռացաւ մրցաշարքէն: Պասէլ անցաւ Բ. հանգրուան: Ռուսացիք ոչինչ ունէին ներկայացնելիք այս մրցաշարքին:

**Դ. խմբակին** մէջ Ռէալ Մատրիտ, որ կը նկատուէր անմըրցելի, բոլոր մրցումները աւարտեց յաղթանակով: Իր առաջին մրցումին իսկ, Տինամօ Չադրէպի մէջ, յաղթանակ մը տանելով, ան բոլորին յուշեց, թէ այս տարեշրջանին ալ գլխաւոր թեկնածուն է տիտղոսին: Ճիշդ է, որ Սպանիոյ ախոյեանութեան անոնք «անհաճոյ» արդիւնքներ արձանագրեցին, սակայն Ռէալի համակիրները վստահ են, որ «սեւ ամպերը» չուտով պիտի անցնին: Լիոն եւ Այաքս այս տարի աւելի լաւ արդիւնքներ արձանագրեցին եւ իրենց առաջին մրցումներուն անոնք դարձան վճռական մրցակիցներ: Այս մրցաշարքի մեծագոյն «հանելուկային գայթակղութիւնը» պատահեցաւ վերջին հանգրուանին: Այաքս իր մրցումին պէտք ունէր մէկ կէտի, մինչ Լիոն պիտի սպասէր որ Այաքս իր դաշտին վրայ պարտուի, իսկ ինք Չադրէպի մէջ... եօթը կամ ութը կողի

տարբերութեամբ յաղթէ: Եւ այդպէս պատահեցաւ... Այաքս-Ռէալ մրցումին հոլանտացիք երկու կողմէն նշանակեցին, սակայն իրաւարարը մերժեց անհասկնալի պատճառներով եւ Այաքս պարտուեցաւ: Նոյն պահուն, Լիոն Զադրէպի մէջ առաջին խաղակէսը հաւասար աւարտելէ ետք՝ Բ. խաղակէսին եօթը մէկ արդիւնքով յաղթեց Տինամոյին:

**Ե. խմբակին** մէջ պատկերը քիչ մը անորոշ էր: Չելսի վերանորոգուած կազմով կը ներկայանար եւ մեծ յաւակնութիւններ ունէր: Առաջին մրցումին անոնք յաղթեցին Գերմանիոյ ախոյեան Լեւերքուզընին: Սպանիոյ Վալենսիան հաւասարութիւն արձանագրեց Պելճիքայի Ճէնքին հետ: Սպանացիք անծանօթ մարզիկներու հոյով մը յաղթանակէ յաղթանակ կը սուրան Սպանիոյ ախոյեանութեան: Այս երկուքին մրցակիցը Պայէրն Լեւերքուզընն է: Գերմանացիք եւս դրական արդիւնքներով սկսան տարեշրջանի իրենց մրցումները: Պելճիքացիք լաւ կազմ ունին, բայց այս «մեծ»երուն մէջ «կորսուեցան»: Վերջին հանգրուանին, անգլիացիք երեք անպատասխան կոլերով յաղթեցին սպանացիներուն եւ Գերմանիոյ ներկայացուցիչին հետ անցան երկրորդ հանգրուան:

**Զ. խմբակին** ուժերը հաւասար էին: Ֆրանսայի Մարսէյը թէեւ իր երկրին մէջ տակաւին ինքզինք չէր գտած, սակայն յաջողեցաւ յաղթանակներ արձանագրել եւ յունական Օլիմպիաքոսն ու Գերմանիոյ Տորթմունտը գերազանցել: Յոյները իրենց երկրին մէջ միշտ ալ փայլուն արդիւնքներ արձանագրելով՝ Եւրոպայի մէջ յաջողութիւն չեն ունեցած: Անգլիոյ Արսենալը յաջողեցաւ ինքզինք փաստել հակառակ երիտասարդ կազմ ունենալուն եւ գրաւել խմբակին Ա. դիրքը: Գերմանիոյ ախոյեան Տորթմունտը հեռու էր անցեալ տարուան թէ՛ մակարդակէն եւ թէ՛ արդիւնքներէն: Անոնք



Օլիմպիաքոսի ետին գրաւեցին խմբակին վերջին դիրքը:

**Է. խմբակին** մէջ արձանագրուեցան այս մրցաշարքի մեծագոյն անակնկալները: Թէեւ չորս կազմերն ալ մրցակիցներ էին, սակայն Փորթօ եւ Շախթիոր կը նկատուէին հիմնական թեկնածուները: Մեծագոյն անակնկալը եկաւ Կիպրոսի Ափոնէլէն, որ Զենիթին հետ գրաւեց խմբակին առաջին երկու դիրքերը: Շախթիորն ու Փորթօն «տուն ճամբուեցան»:

**Ը. խմբակին** մէջ Պարսելոնայի եւ Ա. Սէ. Միլանի գերակայութիւնը նկատելի էր ի սկզբանէ: Այս երկուքին միջեւ կատարուած առաջին մրցումը «Քամփ Նու»ի մէջ հաւասարութեամբ աւարտեցաւ: Իտալացիք նախորդ տարիներու փայլուն կազմը չունին: Պարսանոյնքան հզօր է, սակայն կը տառապի վիրաւոր մարզիկներու բացակայութենէ: Հակառակ ասոր, երկու կազմերն ալ յաջորդ հանգրուան անցան: Չելսիոյ Վիլիամսը եւ Պիլոուսիոյ Պորիսովը համեմատաբար թոյլ կազմեր են: Անոնք դժուար թէ կարենային արգելք ըլլալ սպանացիներուն եւ իտալացիներուն:

Մինչեւ Դեկտեմբեր երկարող այս մրցակցութիւնը «Զեմփիրնգ Լիկ»ի ամէնէն հետաքրքրական հանգրուաններէն առաջինն էր: Մեծերը փորձեցին փոքրերու ծուղակին մէջ չիյնալ: Փոքրերը զգոյշ եղան եւ յաղթանակներ ապահովեցին: Ըստ կարգ մը մասնագէտներու, այս տարեշրջանին գլխաւոր թեկնածուները կը նկատուին Պարսան, Ռէալ Մատրիտը եւ Պայէրն Միլնիխը, այլ խօսքով՝ «Զեմփիրնգ Լիկ»ի բաժակը հաւանաբար դարձեալ ուղղուի դէպի Սպանիա:

16 Դեկտեմբերին տեղի ունեցաւ Բ. հանգրուանի վիճակաճշգրտութիւնը: Մրցումները տեղի պիտի ունենան Փետրուարին: Ստորեւ՝ մրցումներուն ցանկը:

- Լիոն - Ափոնէլ
- Նափոլի - Չելսի
- Ա. Սէ. Միլան - Արսենալ
- Պասէլ - Պայէրն Միլնիխ
- Պայէրն Լեւերքուզըն - Պարսելոնա
- Սէ. էս. Քա. Մոսկուա - Ռէալ Մատրիտ
- Զենիթ Փեթերսպոլրկ - Պենֆիքա
- Մարսէյ - Ինթէր Միլան

Նշենք, որ այս տարեշրջանի աւարտական մրցումը տեղի պիտի ունենայ 19 Մայիս 2012ին, Գերմանիոյ Միլնիխ քաղաքի «Ալիանց Արենա» դաշտին վրայ:





# ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ՝ ՆՈՒԻՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՂԱՆ ԲԱԽՇԵԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 20ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Թղթակից  
ԵՐԵՒԱՆ



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութիւնը Դեկտեմբերի 16ին, ժամը 16ին, Երեւանի Պետական Համալսարանի ճրգմասնաչէնքի դահլիճում կազմակերպել էր Արցախեան ազատամարտիկ եւ Հայաստանում սկառտութեան վերահիմնադիր Վարդան Բախշեանի նահատակութեան 20րդ տարելիցին նուիրուած յուշ-երեկոյ:

Հրաչ Շմաւոնեանը բացման խօսքով ողջունեց բոլոր ներկաներին, որից յետոյ ցուցադրուեց նոր նկարահանուած կարճամետրաժ ֆիլմ, որը պատմում էր Վարդան Բախշեանի մասին:

Երեկոյի ժամանակ հնչեցին ելոյթներ գորահրամանատար Կոմանդոսի (Արկաղի Տէր Թադեւոսեան), Ե.Պ.Հ-ի «Վարդանանք» ռազմահայրենասիրական ակումբի նախագահ Սաթեւնիկ Աբրահամեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան անդամ Բազրատ Եսայեանի, Ե.Պ.Հ. Պատմութեան Փակոտտեանի դեկանի, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Հրայր Կարապետեանի կողմից, որոնք Վարդան Բախշեանին բնութագրեցին ոչ միայն որպէս երիտասարդ գիտաշխատողի, Հայաստանում սկառտութեան վերահիմնադիրի, Արցախեան ազատամարտիկի, այլեւ՝ մարդկային բացառիկ յատկանիշներ կրող մարդու: Մարդ, որ իր իսկ ներկայութեամբ, գործունէութեամբ ու նախաձեռնութեամբ պատմութիւն կերտեց՝ ապրելով միայն 26 տարի:

Երեկոյի ընթացքում ամփոփուեցին նաեւ Նոյեմբերում յայտարարուած «Արցախեան ազատամարտիկ» շարադրութեան, գեղանկարչութեան եւ լուսանկարչութեան մրցոյթները: Շարադրութեան մրցոյթի դատական կազմի անդամ, գրող-հրապարակախօս Գրիգոր Չանիկեանը յայտարարեց յաղթողների անունները, որոնց տրուեցին վկայագիրներ եւ մրցանակներ: Առաջին մրցանակի արժանացաւ Նայիրա Բասէցեան (Երեւան), երկրորդ մրցանակի՝ Հայկ Յովհաննիսեան (Հրազդան), երրորդ մրցանակի՝ Լիա Օհանեան (Հրազդան), իսկ խրախուսական մրցանակների արժանացան Քնար Բաբայեան (Ստեփանակերտ), Նորիկ Յակոբեան (Գուգարք), Լիլիա Աւետիսեան (Արմաւիր), Աստղիկ Բաբայարեան (Երեւան) եւ Անի Կիրակոսեան (Արմաւիր):

Լուսանկարչութեան եւ գեղանկարչութեան դատական կազմի անդամ եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընդհանուր խմբապետ Վիգէն Յովհաննիսեանը յայտարարեց յաղթողների անունները, ըստ որի՝ լուսանկարչութեան մրցոյթի յաղթողն է Արման Մկրտչեանը (Երեւան), իսկ գեղանկարչութեան՝ Սուրէն Յարութիւնեանը (Վանաձոր): Նոյն մրցոյթում խրախուսական մրցանակի արժանացաւ Արայիկ Խաչատրեանը (Հրազդան):

Երեկոյի յիշարժան մասն էր կազմում «Վարդան Բախշեան» յուշամեղալի անդրանիկ պարգեւատրումը, որը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան որոշմամբ տրուեց քոյր Մարօ Քէչիշեանին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ում ունեցած ներդրումների եւ Հայաստանում սկառտութեան վերահիմնադրման գործում անփոխարինելի աւանդ ունենալու համար:

Երեկոն եզրափակեցին երգիչներ Մկրտիչ Մկրտչեանը եւ Դաւիթ Ամալեանը իրենց անգուգական կատարումներով:



# ՎԱՐՂԱՆ ԲԱԽՇԵԱՆԻ ԱՆՈՒԱՆ ՍՐԱՀԻ ԲԱՑՈՒՄ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ՈՒՄ

**Դ**եկտեմբերի 16ին, Վարդան Բախշեանի նախատակութեան 20րդ տարելիցի օրը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կենտրոնական գրասենեակում տեղի ունեցավ Վարդան Բախշեանի անուան սրահի պաշտօնական բացման արարողու-

թիւն, որին մասնակցում էին վարչութեան անդամներ, Վարդան Բախշեանի ընտանիքի անդամներ, սկաուտներ եւ յարգարժան այլ հիւրեր: Կարմիր ժապաւէնը կտրեցին Վարդան Բախշեանի մայրը՝ Այդա Բախշեանը եւ արմաւիրցի փոքրիկ գայլիկ Գոռը՝ ազդարարելով Վարդան Բախշեան սրահի բացումը:



Վարդան Բախշեանի մայրը՝ Այդա Բախշեանը եւ արմաւիրցի գայլիկ Գոռը կը կատարեն սրահի բացումը:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ եղբ. Յրաչ Շմաւոնեան, արմաւիրցի գայլիկ Գոռը եւ Այդա Բախշեան

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ Հրաչ Շմաւոնեանը իր խօսքի մէջ նշեց սրահի անուանակոչման եւ Վարդան Բախշեանի անունը յաւերժացնելու կարեւորութեան մասին: Նրա խօսքերով այս սրահը կը ծառայի իր նպատակին եւ այստեղ կը կրթուի հասարակութեան ու պետու-

թեան համար պիտանի սերունդ:

Ելոյթ ունեցան նաեւ Վարդան Բախշեանի Հ.Մ.Ը.Մ-ական ընկերները՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան անդամ Բագրատ Եսայեանը եւ Յարութիւն Յարութիւնեանը, որոնք կրկին անգամ փաստեցին Վարդան Բախշեանի վաստակի ու նուիրման մասին: Վարդան Բախշեանի մայրը եւ քոյրը շնորհակալութիւն յայտնեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեանը նման որոշում կայացնելու եւ սրահը Վարդան Բախշեանի անունով կոչելու համար:

## ԱՅՅ ԵՌԱՔԼՈՒՐ

**Դ**եկտեմբերի 16ին լրացավ Վարդան Բախշեանի նախատակութեան 20րդ տարելիցը, որի առիթով Վարդան Բախշեանի ընտանիքի անդամները, «Երեւան» միաւորի սկաուտները եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կենտրոնական Վարչութեան անդամները այցելեցին Եռաբլուրի նահատակաց պանթէոն՝ յարգանքի տուրք մատուցելու Վարդան Բախշեանի շիրիմին:

Թեան անդամներ Դաւիթ Յակոբեանը եւ Ռոմանոս Պետրոսեանը, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ընդհանուր խմբապետ Վիգէն Յովհաննիսեանը: Յաւերժացնելով Վարդան Բախշեանին որպէս մեծ մտաւորականի, հասարակական փայլուն գործչի եւ աննկուն մարտիկի, ելոյթ ունեցողները նշեցին, թէ նրա ներդրումը անփոխարինելի է համարւում սերունդների դաստիարակութեան գործում: Եւ այդ գործը կը յարատեւի, քանի դեռ Վարդանի ցանած սերմերը նոր ծիլեր կը տան:

Յիշատակի ու ոգեկոչման խօսքերով հանդէս եկան Կենտրոնական Վարչու-





# «ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍՈՒՐ ՀԱՆԴԱԿՆԵՐ»

Սեպտեմբերի 21-29ը Սէուղեան Արաբիայում մեկնարկեց «Messengers of Peace»՝ «Խաղաղութեան սուրհանդակներ» սկաուտական ծրագիրը, որին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ից մասնակցեցին Գէորգ Օհանեանը (Արմաւիր) եւ Վահագն Յովհաննիսեանը (Աբովեան):

Ծրագիրը նշանաւորուեց Սէուղեան Արաբիայի եւ Շուէդիայի արքաների ներկայութեամբ, որոնք իրենց ելոյթով անդրադարձան ծրագրի առաքելութեանը:

Ծրագրի հիմքում ընկած է սկաուտական տարբեր կազմակերպութիւնների կողմից մշակուած սոցիալական ծրագրերի իրականացումը, ինչպէս նաեւ ողջ աշխարհում սկաուտութեան դերակատարութիւնը խաղաղութեան

հաստատման ու պահպանման գործում:

Հայաստանի պատուիրակութեան համար նշանակալից էր ծրագրի ընթացքում փորձի փոխանակման քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ շփումը տարբեր մշակոյթ կրող ազգերի հետ:

Այսպիսով այս ծրագիրը մի նպատակի շուրջ կը համախմբի տարբեր մշակոյթ եւ աւանդոյթներ կրող երկրներ:

## Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-Ի ՄԱՄՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ «EXCELSCOUT-2011» ԾՐԱԳՐԻՆ

Նոյեմբերի 11-16, Ղրիմում գտնուող Եւրասիա սկաուտական տարածաշրջանի «Կրասնոկամենկա» կենտրոնում անցկացուեց «Excelscout-2011-Stay in Touch» ուսուցողական ծրագիրը, որին մասնակցեցին տարածաշրջանի 8 երկրներից (Հայաստան, Ազրպէյճան, Վրաստան, Ռուսաստան, Պիեւոնոս, Ուկրայինա, Մոլտովա, Ղազախստան) երեքական ներկայացուցիչներ:



Հայաստանի պատուիրակութեան համար կարեւորուեց աշխատանքային նոր մեթոտիկայի իւրացումը, որը մօտ ապագայում կ'օգտագործուի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի գործունէութեան շրջանակներում:

Բացի աշխատանքային գործընթացից, ծրագիրը ներառում էր նաեւ շրջապտոյտ եւ մշակութային միջոցառումներ:

Ուշագրաւ էր ազգային օրլայ անցկացումը, որի ժամանակ

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ից մասնակցեցին Նարէ Խլղաթեանը (Արմաւիր), Անի Սարգսեանը (Արմաւիր) եւ Արման Թորոսեանը (Երեւան): Բոլոր մասնակիցները բաժանուեցին աշխատանքային երեք խմբերի, մշակեցին երեք առանձին ծրագրեր՝ սկաուտական շարժմանը միացած երիտասարդների համար:

նակ Հայաստանը հանդէս եկաւ իր ազգային խոհանոցով եւ երգ ու պարով:

Շրջապտոյտի շրջանակներում մասնակիցներն եղան Եալթայի մի շարք տեսարժան վայրերում:

Հայաստանի պատուիրակութեան ակտիվ մասնակցութեան շնորհիւ Եւրասիա տարածաշրջանի գրասենեակի կողմից շնորհակալական նամակ ուղարկուեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի կենտրոնական վարչութեանը:

Գործնական աշխատանքը ներառում էր երեք փուլ.

- 1) Ծրագրի մշակում եւ կազմում:
- 2) Ծրագրի իրականացման համար պահանջուող միջոցների հայթայթում:
- 3) Ծրագրի ամփոփում եւ արժեւորում:





## «ՍՈՐՎԷ ԵՒ ՈՒՍՈՒՑԱՆԷ» ԾՐԱԳԻՐԸ ՈՒԿՐԱՅԻՆԱՅՈՒՄ

2-6 նոյեմբերին, Ղրիմում գտնուող Եւրասիա սկաուտական տարածաշրջանի «Կրասնոկամենկա» կենտրոնում անցկացուեց «Սորվէ եւ ուսուցանէ» («Learn and Teach») ուսուցողական դասընթացը, որին մասնակցեցին տարա-

ծաշրջանի 9 երկրների (Հայաստան, Վրաստան, Ազրպէյճան, Ռուսաստան, Ուկրաինա, Ղազախստան, Մոլդովա, Պիեյու-ուսիա, Տաճիկիստան) սկաուտ պատասխանատուներ:

Հայաստանը ներկայացնում էին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ընդհանուր խմբապետ Վիգէն Յովհաննիսեանը, սկաուտական ծրագրերի պատասխանատու Լիլիթ Լալայեանը, երիտասարդական ծրագրերի եւ մարզումների պատասխանատու Կարէն Տէրտէրեանը:

Ծրագրի նպատակն էր պատրաստել երիտասարդ պատասխանատուներ, ովքեր իրենց ազգային կազմակերպութիւններում պիտի ուսուցանեն երիտասարդական ծրագրերի ոլորտում աշխատող պատասխանատուների եւ կամաւորների:

Ծրագիրը հիմնականում ընթացաւ աշխատանքային երեք խմբերում՝ համապատասխան երեք ուղղութիւններով:

1) Ազգային կազմակերպութիւնների «Երիտասարդական ծրագրի» մշակում (կամ վերանայում) եւ իրագործում:

2) Չափահասների-կամաւորների ներգրաւում շարժման մէջ:

3) Ուսուցողական դասընթացների կազմակերպում:

Ծրագիրը իւրապատուկ էր նրանով, որ մասնակիցներն իրենց ազգային սկաուտական կազմակերպութիւններում արդէն իսկ տանում էին ծրագրերի մշակման, իրականացման եւ ուսուցողական դասընթացների կազմակերպման աշխատանքներ, իսկ այս դասընթացը միտուած էր նոր մեթոդների ու մօտեցումների կիրառմամբ այդ աշխատանքների արդիւնաւէտութիւնը բարձրացնելուն:

Ծրագրի մաս էր կազմում նաեւ «Ազգային օր» ունան անցկացումը, որի ժամանակ Հայաստանը ներկայացաւ իր ազգային հագուստով, ուտեստներով, «Եարխուլտա» պարով եւ երգերով:

Մասնակիցների միջեւ հաստատուած ընկերական ու ջերմ յարաբերութիւնները վկայում են Եւրասիա սկաուտական տարածաշրջանի երկրների միասին աշխատելու, փորձ փոխանակելու, սովորելու ու սովորեցնելու մղումը:

## ԳԱՅԼԻԿԱԿԱՆ ԱՐՇԱԻ

Սեպտեմբերի 25ին տեղի ունեցաւ գայլիկական արշաւ դէպի Մուղնի, Օհանավանք եւ Սաղմոսավանք:

Մասնակցում էին Երեւանի «Կենտրոն» խմբի գայլիկները՝



գայլիկ պատասխանատուներ Սոնա Մարգարեանի, Այդա Թորոսեանի, Կարօ Ռեստեւանեանի եւ Լիանա Մելիքեանի պատասխանատուութեամբ:

Արշաւը առանձնայատուկ էր նրանով, որ մասնակցում էին նաեւ գայլիկների ծնողները:

Արշաւի նպատակն էր ծանօթացնել մասնակիցներին գայլիկական եւ սկաուտական առօրեային, տեղեկացնել սկաուտութեան հիմնադրման պատմութեան, աւանդութիւններին եւ ներկայ աշխատելաոճին:

Ծնողների համար նախատեսուած էր հետաքրքիր ու լեցուն օրակարգ, որի պատասխանատուն էր Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի ատենապետ Հրաչ Շմաւոնեանը:

Արշաւը յիշարժան դարձաւ նրանով, որ ընթացքում տեղի ունեցաւ քննութիւն եւ գայլիկական երդման արարողութիւն:

Գայլիկները վառ տպաւորութիւններով վերադարձան Երեւան, նորանոր արշաւների մասնակցելու ակնկալիքներով:



# «ՄՆԱՅՈՒՆ ԴՊՐՈՑ»ՆԵՐ

## Թղթակից ԵՐԵՒԱՆ

### «ՄՆԱՅՈՒՆ ԴՊՐՈՑ 5.1»

2011 թ. Հոկտեմբերի 23ին Երեւանում անցկացուեց «Մնա-յուն դպրոց» ուսուցողական ծրագրի 5րդ հոսքի առաջին դասընթացը:


Ուսուցողական այս ծրագրի նպատակն էր պատրաստել գալլիկական, սկաուտական եւ երէցական խմբակների պատասխանատուներ, առաջնորդներ: Ծրագիրը նպատակ ունեցաւ նաեւ շարժմանը նոր անդամակցած չափահասներին ծանօթացնելու սկաուտական գործունէութեանը:

Հոկտեմբերի 23ի դասընթացին մասնակցեցին 39 հոգի՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի գրեթէ բոլոր միաւորներից:

### «ՄՆԱՅՈՒՆ ԴՊՐՈՑ 5.2»

2011 թ. Հոկտեմբերի 29ին Երեւանում անցկացուեց «Մնա-յուն դպրոց» ուսուցողական ծրագրի 5րդ հոսքի 2րդ դասընթացը:

Դասընթացին մասնակցեցին Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի 27 աստիճանաւոր ու երիտասարդ անդամներ, ովքեր իրենց գիտելիքներն ու հմտութիւնները զարգացրին սկաուտական շարժման ու գործունէութեան վերաբերեալ:



# Elegance Plus

Shoes, Bags,  
Fashion Accessories  
& Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon

Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556

Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812

E-mail: hratch@goldenmountains.com

hratchboy@hotmail.com

## H. N. BOYADJIAN & CO.



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵԼՈՅԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 15ԱՄԵԱԿԸ

Թղթակից  
ԱԼՄԵԼՈ

Հ.Մ.Ը.Մ.ի Ալմերյի վարչությունը, մասնաճիւղի հիմնադրութեան 15ամեակին առիթով, 19 Նոյեմբեր 2011ին կազմակերպեց մարզական եւ սկաուտական հանդիսութիւն մը:

Հանդիսութեան պաշտօնական բացումը կատարուեցաւ սկաուտական եւ մարզական տողանցքով:

«Յառաջ նահատակ» քայլերգէն ետք, Ալմերյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ հոգեւոր հովիւ Մաշտոց Քհնյ-Պաղտասարեան մատուցեց Տէրունական աղօթքը:

Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ ատենապետ քոյր Յասմիկ Օհանեան, որ բարի գալուստ մաղթեց հայ մշակութային միութիւններու ներկայացուցիչներուն, Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէութեան, եկեղեցոյ թաղականութեան, Հոլանտայի սկաուտական Ֆետերասիոնի պատասխանատուներուն եւ բոլոր ներկաներուն:



Մարզական խաղերուն մասնակցեցան աւելի քան 124 մարզիկ-մարզիկուհիներ, Հոլանտայի տարբեր քաղաքներէն ժամանած (Ֆութպոլի խումբեր եւ աղջկանց վոլիպոլի երկու խումբ):

Սկաուտական արարողութիւնը ընդգրկեց երդման արարողութիւն եւ ատիճաններու տուչութիւն:

Երեկոյեան տեղի ունեցաւ 15ամեակի շքեղ պարահանդէսը, որուն ընթացքին Պենելուքսի առաջնորդ Զատիկ Վրդ-Աւետիքեան փոխանցեց իր օրհնութեան խօսքը:

Աւելի քան 450 հոգի մինչեւ ուշ ժամեր հաճելի պահեր անցուցին միասին:

Երեկոն փակուեցաւ ազգայնաշունչ երգերով:





# ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՆԱՀԱՏԱԿ ԵՒ ՆՆՋԵՑԵԱԿ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ



PhotoRAFF

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան արտասանեց խօսք մը, զոր կը ներկայացնենք ստորեւ:

Հ.Մ.Ը.Մ.ի աւանդուածներու հաւատարիմ, այսօր մեզմէ անվերադարձ բաժնորդներուն յարգանքի տուրք տալու «Օր»ն է:

Հաւաքուած ենք ոգեկոչելու համար յիշատակը նահատակ կամ ննջեցեալ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, ըլլան անոնք ըսկառու, մարզիկ թէ վարչական գործունէութիւն տարած քոյր-եղբայրներ: Անոնք անցեալին մէջ գործած անմահներ են, որոնք համոզուած Հ.Մ.Ը.Մ.ի վեհ գաղափարին, երկար տարիներ գործած են ու

անցած: Անոնք տուին անհաշիւ, տուին անսակարկ եւ մինչեւ իրենց վերջին շունչը նուիրուեցան միութեան վսեմ գաղափարին եւ անոր անզուգական «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին:

Իրերայաջորդ սերունդներ իրենց տասնեակ տարիներու վաստակը ունեցան այս միութեան վերելքին եւ ուռճացման մէջ: Միութիւն մը, որ ծլարձակելով ու բազմաճառելով աշխարհի տարածքին, եղաւ 103 ճիւղերով հաստարուն ծառ:

Ինչպէ՛ս կարելի է մոռնալ յիշատակը այն մարզիկներուն, որոնք երկար տարիներ քրտինք թափեցին դաշտերու վրայ՝ բարձր պահելու համար միութեան դրօշը: Ինչպէ՛ս կարելի է չյիշել այն բոլոր քոյրերն ու եղբայրները, որոնք գրկուելով անձնական հաճոյքներէ եւ նոյնիսկ իրենց հարազատ ընտանիքներէն, տարիներ տրամադրեցին ծրագրելու եւ իրագործելու համար լաւագոյնը՝ ի նպաստ միութեան շահերուն: Ինչպէ՛ս մոռնալ կակուղ թաթիկէն մինչեւ շեփորախումբերու անդամներն ու սկառուտական բարձրագոյն դիրքերու վրայ գործած պատասխանատու քոյրերն ու եղբայրները, որոնք սկառուտական այբուբենը սորվեցուցին նորեկներուն եւ օր մը հպարտօրէն տողանցեցին հայկական թաղերու մէջ թէ Մայիսեան փառատօններու ընթացքին:

Այս բոլորը պարտք կը դնեն մեր վրայ, որ չմոռնանք գիրենք ու ոգեկոչենք յիշատակը բոլոր անոնց, որոնք նուիրուեցան Հ.Մ.Ը.Մ.ին ու գործեցին միութեան համար:

Կը սգանք հին թէ նոր մահացած բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն կորուստը անխտիր եւ կ'ոգեկոչենք անոնց վառ յիշատակը, յատկապէս յիշելով վերջին շրջանին մեզմէ բաժնուած

## Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

**Հ**.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, 11 Դեկտեմբեր 2011ին, Պէյրութի Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ննջեցեալներու յիշատակին:

Աւանդութիւն դարձած հոգեհանգստեան պաշտօնին ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, մասնաճիւղերու վարչութիւնները, Շրջանային Սկառուտական Խորհուրդն ու Շրջանային Խմբապետական կազմը, Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու նախկին անդամներ, վեթերան քոյրեր, եղբայրներ, մարզիկներ եւ սկառուտներ:

Հոգեհանգստեան արարողութեան նախագահեց եւ յատուր պատշաճի քարոզեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան:

Իր քարոզին մէջ, Առաջնորդը նշեց Հ.Մ.Ը.Մ.ի ունեցած դերակատարութիւնը ազգային կեանքին մէջ եւ գնահատեց ծառայելու եւ իր ընտանիքէն աւելի մեծ ընտանիքին՝ միութեան նուիրուելու Հ.Մ.Ը.Մ.ականին օրինակելի երելոյթը:

Յետ հոգեհանգստեան պաշտօնին, Առաջնորդարանի դահլիճին մէջ, Առաջնորդ Հօր ներկայութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները եւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ընդունեցին ցաւակցութիւններ:

վաստակաւոր եղբայրներ Վրէժ Ֆուճուրեանը, Գէորգ Գարայոյանը, Տիգրան Նուպարեանը, Վահէ Մինասեանը եւ Սարգիս Աճէմեանը:

Հ.Մ.Ը.Մ-ի Լիրանանի Շրջանային Վարչութեան անունով կը խոնարհիմ յիշատակին առջեւ մեզմէ յաւերժ բաժնուած Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի բոլոր անդամներուն, ամենահամեստ մարդիկէն ու սկառուտէն, յանձնախումբերու թէ վար-

չութիւններու մաս կազմած եւ մինչեւ բարձրագոյն դիրքերու վրայ գործած ու անցած Հ.Մ.Ը.Մ-ական քոյր-եղբայրներուն:

Քաջառողջ եւ երկար կեանք կը մաղթեմ համայն Հ.Մ.Ը.Մ-ականներուն եւ հայ ազգի բոլոր զաւակներուն:

Խուսկ ու մոմ մեզմէ բաժնուած բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականներու անմահ յիշատակին:

## Հ.Մ.Ը.Մ-Ի ՓԱՍԱՏԻՆԱՅԻ «ԱԶԱՏԱՄԱՐՏ»

### ՄԱՄՆԱԾԻՂԻՆ 35ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՏՕՆԸ

**Կ**իրակի, 13 Նոյեմբեր 2011ի կէսօրէ ետք ժամը 5ին, Կլէնտէյլի «Ալեքս» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի «Ազատամարտ» մասնաճիւղի 35ամեակի ձեռնարկներու շարքին առաջինը՝ փառատօնը, կազմակերպութեամբ յորելեար մասնաճիւղի վարչութեան:

Մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Պերճ Պետոյեանի կողքին, ձեռնարկին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան, Փաստինայի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգեւոր հովիւն ու հոգաբարձութեան կազմի անդամները, շրջանի Հ.Յ.Դ. «Լեռնավայր» կոմիտէի եւ քոյր միութիւններու վարչական ներկայացուցիչները, միութեան բարեկամներն ու բարերարները, մասնաճիւղի վարչական լրիւ կազմը եւ կոկիկ թիւով հայորդիներ, որոնք եկած էին թէ՛ լսելու եւ թէ՛ միաժամանակ բաժնեկից դառնալու միութեան 35 տարիներու հպարտանքին:

Բեմին ճակատը, ճերմակ պաստառին վրայ կը ցուցադրուէր նուագախումբին անունը, իսկ անոր երկու կողմերը կախուած էին եղբ. Ժիրօ Թաթիկեանի մտայղացումով պատրաստուած մասնաճիւղի 35ամեակի խորհրդանշանը:

Օրուան հանդիսավար քոյր Սիրան Մարսէլեանի բարի գալուստի եւ շնորհակալական խօսքերէն ետք, ներկաները հրաւիրուեցան յոտնկայս ունկնդրելու Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգ՝ «Յառաջ նահատակ»ը:

Ապա, յայտագիրին առաջին բաժինով, մէկ ժամ տեւողութեամբ, երոյթ ունեցաւ հանրածանօթ «Վիզա» նուագախումբը, որ մեծ խանդավառութիւն ստեղծեց սրահէն ներս՝ իր հրամցուցած մեներգներուն, երգերուն եւ եղանակներուն շնորհիւ:

Կարճ դադարէ մը ետք, սկիզբ առաւ յայտագիրին երկրորդ բաժինը, ուր խօսք առաւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Պերճ Պետոյեան: Ան յայտնեց, որ փառատօնը սկիզբն է մասնաճիւղի հիմնադրութեան 35ամեակին նուիրուած տօնակատարութիւններուն:

«Մեզի համար, - շարունակեց եղբ. Պետոյեան -, 35ամեակը պարզ թուական մը չէ, այլ՝ բոլորիս համար յաղթանակի թուական մը, որ մեզի կը յիշեցնէ, թէ այս մասնաճիւղը ճակատաբաց, գալիք տասնամեակներուն ալ պիտի շարունակէ

իր սրբազան առաքելութիւնը ու իր «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով պիտի դաստիարակէ նորանոր սերունդներ:

Եղբ. ատենապետը շեշտեց նաեւ, որ այս բոլորը անկասկած կարելի պիտի ըլլայ շնորհիւ մասնաճիւղի անդամներուն, բարեկամներուն եւ համակիրներուն անսակարկ նուիրումին ու քաջալերանքին, որոնց փոխանցեց երախտագիտական իր ջերմ խօսքերը:

«Զեր նիւթաբարոյական նեցուկով մասնաճիւղս պիտի կարենայ շարունակել իր հպարտ երթը՝ յանուն մեր ժողովուրդի փայլուն ապագային: Դուք արժանի էք բարձր գնահատանքի: Զեր վարձքը կատար», եզրակացուց եղբ. Պերճ Պետոյեան:

Այնուհետեւ, յայտագիրը շարունակուեցաւ Գառնիկ Սարգիսեանի մեներգներով, ընկերակցութեամբ իր նուագախումբին:

Տեղին է յիշեցնել, որ ազգային-յեղափոխական մեր երգերը պարզ երգեր չեն, այլ՝ իմաստ ու որոշ նպատակ ունին իրենց մէջ: Անոնք հայոց պատմութիւն կը սորվեցնեն զայն երգող նոր սերունդին, յեղափոխական դէմքերու եւ անոնց կատարած սխրագործութիւններու գովերգին կողքին:

Սկսելով իր երգացանկին, Գառնիկ Սարգիսեան նախ մեներգեց «Սեւ խաւարը»՝ մութ բեմին վրայ: Ապա, յաջորդաբար, 27 երգերով, ան կենդանացուց մեր յեղափոխական հերոսներն ու հաւատաւորները, կուսակցութեան հիմնադիրներն ու յանուն ազատութեան զոհուած մեր հին ու նոր ֆետայիները:

Երգերու սկիզբը, քանի մը վայրկեաններու մէջ, Գառնիկ ամփոփ կերպով նախ ներկայացուց իւրաքանչիւր հերոսը եւ անոր նահատակութեան պատմութիւնը կամ դրուագը:

Անկախ այս բոլորէն, Հ.Մ.Ը.Մ-ի «Ազատամարտ» մասնաճիւղի 26 արի-արեւոյշները, սեւ թի-շըրթներով բեմ բարձրանալով Գառնիկին ընկերացան «Փողին ձայնը» երգին: Սրահը կրկին անգամ ապրեցաւ յուզումնախառն խանդավառութիւն եւ հպարտութիւն:

Տպաւորիչ էր յատկապէս Գառնիկի «Ատանայի ջարդը» մեներգը, որուն ընկերացան «Վիզա» նուագախումբէն Անդրանիկ Գիզիրեան՝ կիթառով եւ Քրիս Տանիէլ՝ թմբուկով:

Օրուան յայտագիրը ավարտեցաւ «Արիւնոտ դրօշ»ով:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻՆ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

**Հ**այաստանի վերանկախութեան տօնը Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղը նշեց պարահանդէսով մը, որ տեղի ունեցաւ 22 Սեպտեմբեր 2011ին, Ամմանի ակումբի «Տաքսեան» սրահին մէջ, ներկայութեամբ 110 Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու, որոնք յիշատակելի ուրախ պահեր անցուցին երգիչ Սազոյի ընկերակցութեամբ: Բոլորը երգեցին, պարեցին, խանդավառեցին ու խանդավառուեցան անկախութեան



տեսլականը եւ ամբողջական Հայաստանի երազը վառ պահած իրենց հոգիներուն մէջ:



Նկարները խօսուն վկաներն են պարահանդէսին մթնոլորտին մասին:

## «Հ.Մ.Ը.Մ.- ՖՐԱՆՍ»Ի ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒԻ ԿԱՂԱՆԴԸ

### Թղթակից ՓԱՐԻՉ

**«Հ**.Մ.Ը.Մ.- Ֆրանս»ի սկաուտները միութենական անցնող տարեշրջանին ո՛չ մրցանակներ չահեցան, ոչ ալ ցնցիչ ստեղծագործութիւններ կատարեցին՝ այլ՝ պարզապէս իրենց «անկիւն»էն ներս, ամէն Կիրակի, շիթ առ շիթ կաթեցուցին քիչ մը սկաուտական ոգի, ու մա՛յ մը հայկականութիւն եւ մարդկային ազնիւ գաղափարներու հաւատք:

Այդ շարքին, մեծ տօնակատարութիւն մը չէր, սակայն անխուսափելի էր անտեսել «Կաղանդի օր»ն ու «Կաղանդ պապուկ»ը, որուն անհամբեր կը սպասեն մեծ ու պզտիկ...

Կիրակի, 11 Դեկտեմբերին, արդէն «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս»ի սկաուտները՝ 50 հոգի, պատրաստ էին ընդունելու մեծ հիւրը:

Սկաուտական արարողութիւններ՝ տողանցք, գնահատականներու եւ պաշտօններու տուչութիւն բացումը կատարեցին օրուան:

Միւս կողմէ, շեփորախումբը կաղանդի նուիրուած եղանակներով շէնցուց մթնոլորտը:

Վարչութիւնը ունէր իր խօսքը, զոր փոխանցեց եղբ. Անտրէ Տատայեան: Ան շեշտեց, որ 2012ին «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս» կը թեւակոխէ իր հիմնադրութեան 35ամեակը. «35 տարիներ, որուն անմոռանալի եւ յաջողութիւններով լեցուն անցեալը

կը պարտինք Հ.Մ.Ը.Մ.ական կամաւոր քոյր-եղբայրներու անդուլ աշխատանքին եւ զոհարելութիւններուն, նաեւ՝ մեր համակիրներուն, որոնք տարիներ շարունակ քաջալերած են «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս»ը իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութեամբ»: Եղբայրը իր խօսքը փակեց վերանորոգուած ուխտով երթը շարունակելու յորդորով:

Պաշտօնական բաժինին յաջորդեց գուարճութեան եւ զբօսի մթնոլորտը: Տաղաւարներ՝ զանազան խաղերով, վիճակախաղ թէ՛ անուրդ ստեղծեցին տօնական մթնոլորտ, որուն համար հաւաքուած էին այդ օր ծնողները, իրենց զաւակներուն հետ հաճելի պահեր անցրնելու:

Անշուշտ, օրը իմաստագուրկ կը դառնար առանց «Կաղանդ պապա»յի ժամանման: Եւ չուշացաւ ան: Խանդավառ երգերով ու կանչերով սկաուտները դիմաւորեցին որքան ծեր, նոյնքան մըն ալ երիտասարդ այդ «հսկան»:

Չիր ու չամիչի տոպրակներով բեռնաւորուած «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս»ի սկաուտները այդ օր վերադարձան տուն:

Բայց այդ օր «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս»ի սկաուտները նուաճեցին ամէնէն կարեւորը: Ամբողջ օրուան ընթացքին, յայտագրի ամբողջ տեւողութեան, անոնք խօսեցան ու երգեցին միայն հայերէն: Յամաքամասի մը մէջ, ուր հայերէնը դարձած է «չպար» ու «աւելորդ ծանրութիւն»:

Եւ այդ օր «Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս»ի երիտասարդ անդամները նուաճեցին կարեւորագոյնը՝ գիտակցութիւնը, պահպանելու ազգային արժէք մը, վեր՝ ամէն տեսակի նիւթական մրցանակէ:



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԲԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՇԷ «ՄԱՐՄՆԱՄԱՐՁ»Ի 100ԱՄԵԱԿ ԵՒ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ «ՄԱՐՁԻԿ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆԵՐՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՆ ՍՊԱՆԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Թղթակից  
ՊՈՒՆՆՈՍ ԱՅՐԷՍ

**Ս**կառուտական շարժումը առաջնորդող բարձր գաղափարականը եւ Հ.Մ.Ը.Մ.ի նախաձեռնած մարզական նախաձեռնութիւնները ներկայացուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած Հանդիսութեան մը ընթացքին, որ տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 16 Նոյեմբեր 2011ին, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 93րդ տարեդարձին օրը, Հ.Յ.Դաշնակցութեան «Էտուարտօ Սէֆէրեան» սկումբին մէջ:

Հանդիսութեան ներկայացուեցան Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօս Շաւարշ Քրիսեանի գաղափարները՝ «Մարմնամարզ»ի էջերուն ընդմէջէն: Այս առիթով ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը ծանօթացնող տեսերիկ մը: Ընթերցուեցաւ «Մարմնամարզ»ի առաջին խմբագրականը, որ ներկաներուն գաղափար մը տուաւ թերթին հիմնադիրին՝ Շաւարշ Քրիսեանի մտքին ու ոգիին մասին:



նապաշտ քայլերով: Ան Փիզիքապէս անհետացաւ, բայց իր առաքելութիւնը շարունակուեցաւ 1918 թուականին ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեամբ: Ինը տարի ետք, 1927 թուականին ծնունդ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը:

Եղբայր Յովհաննէսեան իր խօսքը աւարտեց մեծարելով բարերար եւ նախկին նախագահ Խորխէ Խուան Միրիճեանը, որուն ազնիւ նուիրատուութեամբ լոյս տեսաւ «Մարզիկ»ի խմբագրականներու երկրորդ հատորին սպաներէն թարգմանութիւնը:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԻԱՏՔ, ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏԳԱՄ**  
«Մարզիկ»ի խմբագրականներու երկրորդ հատորին թարգմանիչը հանդիսացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեանը, որ հինգ տարի առաջ սկսած իր նուիրեալ աշխատանքը շարունակելով՝ իր մեծ նպաստը բերաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պաշտօնաթերթի հորիզոններուն ընդլայնման՝ սպանախօս լայն զանգուածի մը մօտ: Իր ջանքերուն շնորհիւ, «Մարզիկ»ի խմբագրականներու սպաներէն թարգմանութեան առաջին հատորը լոյս տեսաւ 2009 թուականին, ի յիշատակ Յակոբ Զէքեանի (Գորտոպա):

**«ՄԱՐՄՆԱՄԱՐՁ»Ի 100ԱՄԵԱԿ**  
Հանդիսութեան սկիզբը, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութիւն Յովհաննէսեան ներկաներուն ներկայացուց 20րդ դարու սկիզբը թրքական ճնշումի տակ շարձարուող հայ ժողովուրդի ծանր տառապանքները:  
Շաւարշ Քրիսեան եղած է այն նուիրեալ անձերէն, որ մեր ժողովուրդի վերագարթօնքի օրերուն ցոյց տուած է ինքնագարգացման ու գոհողութեան ճամբան: «Մարմնամարզ»ի հրատարակութեան հետ, 1911 թուականին տեղի ունեցան հայկական առաջին օղիմպիական խաղերը, իսկ 1912ին ծնունդ առին հայկական սկառուտական առաջին խումբերը:  
Քրիսեան գոհ գնաց 1915 թուականի Յեղասպանութեան, սակայն «Մարմնամարզ»ի էջերուն ընդմէջէն իր գաղափարական տարածուեցաւ եւ ծաղկեցաւ հետեւորդներու գործ-



Երկրորդ հատորը լոյս տեսաւ շնորհիւ Խորիւէ Խուան Միրիճեանի նիւթաբարոյական օժանդակութեան: Միրիճեան հաւատաց Հ.Մ.Ը.Մ.ի խօսքին ու գործին: Դժբախտաբար, ան չկարողացաւ տեսնել գիրքին հրատարակութիւնը: Իր գաւակը՝ Փաթրիսիօ Միրիճեան տէրը կանգնեցաւ հօրը խոստումին եւ իր անվերապահ օժանդակութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարական վեճ գործին: Բան մը, որուն համար Փաթրիսիօ եւ իր հարազատները արժանացան իրենց հօր յիշատակը պանծացնող ներկաներու ջերմ ծափահարութիւններուն:



լոս Սէֆէրեան նոր վերադարձած ըլլալով իր կազմի Պէյրութի լրագումար ժողովէն, ներկաներուն կարեւոր տեղեկութիւններ տուաւ միութեան ապագայ ծրագիրներուն մասին, շեշտելով ձեռնարկին կարեւորութիւնը: Ան իր խօսքին մէջ նշեց, որ 2012 թուականին պիտի կը նշուի հայ սկաութեան հիմնադրութեան հարիւրամեակը:

**ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱԿՈՒՄ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Առաջնորդ Գիսակ Արք. Մուրատեան օրհնեց այս նախաձեռնութիւնը, դրուատելով բարերարին օրինակելի օժանդակութիւնը եւ բոլորը հրաւիրելով օգտաշատ այս գիրքին հաճելի ընթերցման Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

Գիրքին մանրամասնութիւնները ներկայացնելու համար, թարգմանիչը՝ եղբ. Աբրահամ Ահարոնեան կարգաց «Մարգիկ»ի խմբագրականներէն հետաքրքրական բաժիններ:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ**  
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գար-

with the complements of

# Restaurant Al-Mayass



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 16ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ

## ՓՈՒՆԹԱ ՏԷԼ ԷՍԹԷ, ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

Թղթակից  
ՈՒՐՈՒԿՈՒԷՅ

**Ն**աևասարդեան մարզախաղերու 15 տարուան պատմութենէ, 15 տարուան անմոռանալի ապրումներէ ետք, որոնց ընթացքին ահագին յիշատակներ եւ բարեկամութիւններ հիւսուեցան, մեծ մարտահրաւէր կը ներկայացնէր կազմակերպել Նաևասարդեան 16րդ մարզախաղերը: Աւելի՛ն, նկատի առնելով որ ընդամէնը քանի մը ամիս առաջ միայն Հ.Մ.Ը.Մ.Ի նոր վարչութիւն կազմուած էր Մոնթէվիտէոյի մէջ, ամբողջութեամբ «Վաւան» ակումբի երիտասարդներէ, որոնց մեծամասնութիւնը սկսնակ էր ղեկավարութեան գործին մէջ:

Վարչութիւնը անմիջապէս գործի լծուեցաւ, ծրագրելով խաղերու այս նոր փուլը, հիմնական նպատակ ունենալով տարբեր եւ գրաւիչ առաջարկ մը յղանալ երիտասարդներու համար: Խորհելով որ վայրի փոփոխութիւնը կրնար նորութիւն ըլլալ, ծնաւ Փունթա տէլ Էսթէի մէջ կատարելու գաղափարը: Քաղաք մը, որ Հարաւային Ամերիկայի ամէնէն գրաւիչ տեղերէն մէկն է:

Զեւնարկին կազմակերպումը, Մոնթէվիտէոյէն հեռուորութիւնը, ենթակառոյցի եւ կազմակերպչական խընդիրներու լուծումը դիւրին չէին: Պէտք եղաւ ամիսներու պատրաստութիւն եւ աշխատանք, զորս վարչութիւնը գլուխ հանեց մեծ ոգեւորութեամբ եւ արդիւնաւէտութեամբ: Հարկ է նշել, որ վար-



Alberto M. S

չութեան աջակցեցան տարբեր յանձնախումբեր, կազմուած ակումբին զանազան միութիւններուն պատկանող երիտասարդներէ եւ չափահասներէ, որոնք աշխատեցան զանազան մարզերու մէջ:

Գործունէութեան մեծ ծաւալը եւ յաջող կազմակերպումը անմիջապէս փարատեցին կասկածները անոնց, որոնք կը մտածէին թէ հնարաւոր եւ ցանկալի չէր Նաևասարդեան մարզախաղերը կազմակերպել ակումբէն դուրս:

Երիտասարդ յանձնախումբը նկատի

ունեցած եւ ըստ այնմ դասաւորած էր բոլոր մանրամասնութիւնները, նոյնիսկ ժողովուրդին մասնակցութիւնը ապահովելու համար, իրենց տրամադրութեան տակ դրած էր ձրի փոխադրամիջոց, զոր ամէն օր կը կատարէր Մոնթէվիտէո - Փունթա տէլ Էսթէ ճանապարհը:

Ծրագիրը կը մեծնար եւ խանդավառութիւնն ալ զուգահեռ, բոլոր շրջանին մէջ:

Վերջապէս հասաւ նշուած օրը, եւ «Գամփուս տէ Մալտոլատո»յի շքեղ կառոյցները հազան Հայաստանի բեհեզ, հսկայ դրօշակներով, Հ.Մ.Ը.Մ.Ի զինանշաններով եւ ամէնուր հսկայ պաստառներով: Անոնք ընդունեցին մեծ պատուիրակութիւններ, աւելի քան 450 երիտասարդներով՝ Պուէնոս Այրէսէն, Գորտոպայէն, Մոնթէվիտէոյէն, Սան Փաւլոյէն եւ Ռոսարիոյէն: Բացառիկ եղաւ Վենեզուելայի հայ գաղութին ներկայութիւնը, որ առաջին անգամ ըլլալով մասնակցեցաւ փոքր, բայց խանդավառ պատուիրակութեամբ մը:



Alberto M



Բացման արարողութիւնը Նաւասարդեան մարզախաղերու տպաւորիչ բաժիններէն մէկն է: Այսպէս, պատուիրակութիւններ իրենց մուտքը կատարեցին մեծ խանդավառութեամբ, «Արիւնստ դրօշ» երգին ընկերակցութեամբ:

Այնուհետեւ, երեք օրուան ընթացքին, իրարու յաջորդեցին մարզական մրցումները ճամբարի զանազան մարզաժամանակներուն եւ մարզադաշտերուն մէջ: Մինչ այդ, յաճախող ժողովուրդը կը շրջէր մարզադաշտերու թրիպիւնները, պարտէզները եւ հսկայ վրանները, որոնք կը ծառայէին որպէս հիւրանոց, հրամցներով հայկական երաժշտութեան տեսահոլովակներ:

Երեխաներուն համար անմոռանալի պիտի մնայ «Նոկարօ» համալիրի սրահին մէջ տեղի ունեցած պարի ցերեկոյթը, ուր անպակաս եղան անուշեղէնները, հիւթեղէն ըմպելիները, քոթիոնը եւ բարեկենդանի հագուստները:



Գալով երիտասարդներուն, ըստ սովորութեան, անոնք եւս «Նոկարօ» համալիրի սրահներուն մէջ ունեցան իրենց պարահանդէսը, որ կը հանդիսանայ Նաւասարդեան մարզախաղերու ամէնէն հաճելի պահերէն մէկը: Հոն անոնք անգամ մը եւս ցոյց տուին իրենց հայկական ինքնութիւնը եւ յանձնառութիւնը, պարահանդէսը փակելով հայկական ազգային երգերով, բոունցքները բարձր միասնաբար երգելով, հաս-

տատելով, թէ սերունդէ սերունդ կը մեծնայ հուրը, կը նորոգուի եւ կ'աւելնայ անոր գօրութիւնը:

Մեծերուն եւ փոքրերուն խանդավառութիւնը ցոյց տրուաւ, որ բոլորը վայելեցին մարզախաղերու երեք օրուան իւրաքանչիւր վայրկեանը:

Շատերը ըսին, թէ կայ Նաւասարդեան մարզախաղերէն առաջ մը եւ յետոյ մը:

Չենք գիտեր եթէ այդպէս է, սակայն վստահ ենք, որ այժմ, աշխատող խումբը ընծայեց իր լաւագոյնը, որպէսզի գործունէութեան ծրագիրը յաջողութեամբ պսակուի:

Եւ այս պատասխանատուութիւնը երիտասարդները իրենց ուսերուն առին Հ.Մ.Ը.Մ.ական ոգիով, ուրախութեամբ եւ յաջողութեամբ:

Վստահ ենք, որ Նաւասարդեան մարզախաղերու շարքին 16րդը անջնջելի պիտի մնայ բոլոր անոնց յուշերուն մէջ, որոնք առիթը ունեցան մասնակցելու անոր:

## ՊԱՏՔԱՄՆԵՐ

**ԵՂԲ. ԳԱՐԼՈՍ ՍԵՖԵՐԵԱՆ (Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ).**- Կը շնորհաւորեմ Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը եւ հիւրընկալ մասնաճիւղը՝ «Վոսմեան» ակումբը այս ձեռնարկին յաջողութեան համար... Նոյնպէս կը շնորհաւորեմ կազմակերպիչները, որոնք այս մարզախաղերուն մրցանակը անուանեցին «Շաւարշ Քրիսեան»։ մեծարանք մը Հ.Մ.Ը.Մ.ը ստեղծող այն մեծ անձնաւորութեան, որ հազիւ քսանհինգ տարեկանը բոլորած, յաջողութեամբ կարողացաւ մեր դրօշին ու նպատակներուն տակ համախըմբել հայ երիտասարդութիւնը: Քրիսեան 1915 թուականի Ապրիլ 24ի զոհերէն մէկը եղաւ...

Չեմ ուզեր խօսքս փակել առանց շնորհակալութիւն յայտնելու Ուրուկուէյի արտաքին գործոց նախարար Լուիս Ալմակրոյին, իր օրինակելի կեցուածքին համար, զոր քանի մը շաբաթ առաջ ունեցաւ, երբ յայտարարեց, թէ Ուրուկուէյը կ'ուսումնասիրէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան ճանաչման կարելիութիւնը...:

**ԵՂԲ. ԱՐՄԱՆՏՕ ԹՈՐԳՈՍԵԱՆ (Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՓՈԽ ԱՏԵՆԱՊԵՏ).**- Խօսքս կը սկսիմ բարի գալուստ յայտնելով ներկայ մասնաճիւղերուն, ինչպէս նաեւ՝ հրաւիրեալ պատուիրակութիւններուն... Մեր կազմակերպութիւնը, որ ծնունդ առած է ցաւի ընդմէջէն, 93 տարիներ առաջ, ժամանակի բերումով զարգացաւ, վերածուելով Սփիւռքի ամենամեծ կազմակերպութիւններէն մէկուն: Մարմնամարզի, սկաուտական եւ ընկերային գործունէութեան միջոցով, Հ.Մ.Ը.Մ.ը տեղ տուաւ անձնական ու համայնքային ինքնութեան հզօրացման ճիշդ միջավայրին՝ երիտասարդներուն համար: Մեր մասնաճիւղերէն իւրաքանչիւրը դպրոց մըն է: Մեր մանուկներն ու երիտասարդները առիթը կ'ունենան մեր մեծ ընտանիքին մաս կազմելու, զարգանալով որպէս անհատ, նոյնիսկ շատ անգամ իրենց ընտանիքն ալ կազմելով: Միջավայր մը, ուր մեր բոլոր սերունդները կ'ապրին համերաշխութեամբ...

Բոլորդ բարի եկած էք: Մեր փափաքն է որ այս մարզախաղերը յաջողութեամբ պսակուին եւ մեր հոգիները միշտ բարձր պահեն, հետեւելով մեր նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ին:

## ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԵՐԱԽՏԱԳԻՏԱԿԱՆ ԽՕՍՔԵՐԸ

Ամէն անգամ որ մասնակցինք նոր փորձառութիւն մը կ'ունենանք: Մեր բաղաբը կը վերադառնանք հայկականութեամբ լի եւ երջանիկ, այս անմոռանալի օրերը ձեզի հետ բաժնեկցած ըլլալուն համար:

Շնորհակալութիւն կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ.ին, իր սիրալիր հրաւերին համար, ու անհամբեր կը սպասենք Հարաւային Ամերիկայի մեր հայ եղբայրներուն հետ մեր ունենալիք յաջորդ հանդիպումին:

ԽՈՒՄՆ ՏԱՆԻԷԼԵԱՆ  
(ՌՈՍԱՐԻՕ)

Կը բարեւենք Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր եղբայրներուն ու մասնաճիւղերուն: Նախ շնորհակալութիւն կը յայտնենք ձեզմէ իւրաքանչիւրին, որ մեզի առիթը տուիք Նաւասարդեան մարզախաղերուն մասնակցելու: Տեղեակ չէինք որ մեր ընտանիքը այսքան արժէքներ ունի, եւ թէ իր պատմութեամբ այսքան հարուստ է: Մենք ականատես եղանք մարզական իրադարձութեան աննման իրագործումի մը, ուր մարմնամարզը կը կապուի եղբայրութեան ու հայկականութեան զգացումին: Մեր հոս եղած իւրաքանչիւր պահը արժեւորուեցաւ նոր անձեր ծանչնալով եւ յարաբերութիւններ մշակելով:

ՀՐԱՆԴ ԳԱՐԱՕՂԱՆԵԱՆ  
(ՎԵՆԵԶՈՒԵԼԼԱ)

Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 16րդ մարզախաղերուն մասնակցող Պրագիլի պատուիրակութեան 19 անդամներէն եօթն առաջին անգամն է որ այս փորձառութիւնը ունեցան, անոնց տարիքը ըլլալով 15-19: Երբ Ուրուկուէյ ժամանեցինք, մինչեւ «Վռամեան» ակումբ հասնիլը, խանդավառութիւնը արդէն մարմին առաւ...

Խաղերուն առաջին օրէն իսկ, բացումին, բոլորին եռանդը բարձր եղաւ, նոյնիսկ անոնք որոնք առաջին անգամ ըլլալով կը մասնակցէին այս մարզախաղերուն: Շուտով բարեկամութիւն ստեղծուեցաւ Արժանթինի եւ Ուրուկուէյի հայրենակիցներուն հետ: Թէեւ մեր մարզիկները այս տեսակ հանդիպումներու շատ վարժ չեն, սակայն յաջողութեամբ մասնակցեցան ֆութպոլի, վոլիպոլի եւ փինկ-փոնկի մրցումներուն: Արդիւնքը դրական եղաւ: Նկարները, յիշատակներն ու կատակները արձագանգ գտան բոլորին ֆէյսպուքի հասցէներուն վրայ: Նոր բարեկամներ, որոնք միշտ իրարու մօտ պիտի մնան:

Թող յաջորդ Նաւասարդեան մարզախաղերը շուտով հասնին:

ՆԻԿՈԼ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ  
(Ս.Ա.Ս.Ա. ՍԱՆ ՓԱՌԲԼՕ)

Հ.Մ.Ը.Մ.ի Գորտոպայի մասնաճիւղի վարչութիւնը անկեղծ ու խորին շնորհակալութիւն եւ շնորհաւորութիւն կը յայտնէ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան այս ձեռնարկին կազմակերպումին համար, նաեւ՝ Մոնթեվիտոյի մասնաճիւղի մեր սիրելի եղբայրներուն, իրենց փայլուն աշխատանքին համար, ինչ որ պսակուեցաւ մեծ յաջողութեամբ: Այս իրականութիւնը կ'ապացուցէ երեք օրուան ընթացքին տեղի ունեցած գործունէութիւնը, որուն ընթացքին մեր երիտասարդ մարզիկները անմոռանալի ապրումներ ունեցան: Անկասկած, այս յաջողութիւնը արդիւնք է 16 տարիներու ընթացքին կատարուած աշխատանքին, զոհողութեան, գաղափարներու, երազներու եւ իրականութիւններու, եւ նոյնպէս՝ ինչու չէ՝ ձախողութիւններու, զորս կարելի եղաւ յաղթահարել...: Այս ձեռով, բարեբախտաբար, մեր ուժերը վերանորոգուած են, որպէսզի կարենանք շարունակել, ու նաեւ՝ մեր երազները, որ պիտի փոխարինենք տարի մը եւս, մինչեւ յաջորդ Նաւասարդեան մարզախաղերը:

ԷՏՈՒԱՐՏՕ ԹՈՒԹՈՒՇԵԱՆ  
(ԳՈՐՏՈՊԱ)

Սրտի մեծ ուրախութեամբ կը շնորհաւորենք թէ՛ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը եւ թէ՛ հիւրընկալ մասնաճիւղը՝ Մոնթեվիտոն, Նաւասարդեան այս մարզախաղերու յաջողութեան համար: Շրջանին մէջ երկար տարիներու ընթացքին կազմակերպուած այս խաղերը տարուէ տարի յաջողութեամբ կը պսակուին, ինչ որ անկասկած արդիւնք է փորձառութեան եւ խանդավառութեան: Պուէնոս Այրէսի պատուիրակութիւնը ըլլալով մարզախաղերուն ամէնէն մեծաթիւը, անկասկած, անմոռանալի յիշատակներ պիտի պահէ իր անդամներէն իւրաքանչիւրին մտքին մէջ: Մեզի համար մեծ պատիւ է «Շաւարշ Քրիսեան» մրցանակին արժանացումը: Յաջողութիւն բոլորիդ: Անհամբեր կը սպասենք յաջորդ տարուան մարզախաղերը:

ՎԻՍԵՆԹԷ ՅՈՎԱՍՍԱՓԵԱՆ  
(ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԲՂԱՅԻՆ 41ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

## - «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ՅՈՒՇԱՄԵՏԱԼԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԶՈՐՍ ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ

### Թղթակից ԹՈՐՈՆԹՕ

Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի միջ-մասնաճիւղային 41րդ մարզախաղերուն փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 27 Նոյեմբեր 2011ի յետմիջօրէի ժամը 2ին, Թորոնթոյի Հայ Երիտասարդական Կեդրոնի Հ.Մ.Ը.Մ.ի մարզասրահին մէջ:

Բազմաթիւ ծնողներ, Հ.Մ.Ը.Մ.ի վեհաժողովի անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի վեհաժողովի անդամներ, սրահին մուտքին անհամբեր կը սպասէին տողանցքին ազդանշանին:

Հասաւ պահը, երբ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին առաջնորդութեամբ, մուտք գործեցին օրուան նախագահ՝ տիկին Արմէնուհի Գոլոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ Եղբ. Արմէն Կէտիկեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամներ, մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներ եւ հարիւրաւոր անդամ-անդամուհիներ:

Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի, Գէմպրիի, Տիթրոյթի, Լաւալի, Փասատինայի եւ հիւրընկալ Թորոնթոյի մասնաճիւղի մարզական խումբերը՝ շուրջ 300 մարզիկ-մարզիկուհիներ, որոնք հաստատ՝ իրենց «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, հպարտ ու աննկուն քայլերով մուտք գործեցին սրահ, արժանանալով բազմահարիւր հայորդիներու ծափողջոյններուն:

Չեունարկը սկսաւ շեփորախումբին կողմէ Միացեալ Նահանգներու, Գանատայի եւ Հայաստանի քայլերգներուն կատարումով:



Օրուան հանդիսավարն էր քոյր Կարինէ Քէօսեան: Քոյրը բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհակտեց բոլոր մարզիկ-մարզիկուհիները 41րդ մարզախաղերուն իրենց ներկայութեան համար: Ապա, ան հրաւիրեց Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Վաչէ Պոյաճեանը փոխանցելու վարչութեան խօսքը:

Եղբ. Պոյաճեան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան, ըսելով թէ Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի չորս ծագերուն ծրագրեց, կազմակերպեց եւ գործեց, միշտ նկատի ունենալով «Առողջ միտք՝ առողջ մարմնի մէջ» նշանախօսքը:

Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի անդամ եղբ. Նորայր Պէրպէրեան Հայ Կեդրոնի համալիրէն ներս գործող միութիւններուն անունով փոխանցեց իր սրտի խօսքը:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Բաֆֆի Աբանեան:

Եղբ. Աբանեան պարզ ու յստակ, երիտասարդներուն մատչելի բառերով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի միջ-մասնաճիւղային 41րդ մարզախաղերուն պատմութիւնը: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ «Այս մարզախաղերուն մեծագոյն նպատակը երիտասարդութիւնը քով-քովի բերելն է»:

Եղբ. Աբանեանի խօսքէն ետք, Շրջանային Վարչութեան անդամ քոյր Հելէն Նաճարեան ներկայացուց օրուան նախագահ Արմէնուհի Գոլոյեանը: Հայ Օգնութեան Միութեան հիմնադիր անդամուհի Արմէնուհի Գոլոյեան այս առիթով Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին արժանացաւ՝ տարիներու ընթացքին միութեան իր բերած օժանդակութեան համար:

Գոլոյեան զգացուած իրեն ընծայած մեծ պատիւին համար, շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի վարչութեան եւ իր խօսքին մէջ ըսաւ. «Միեւնի մարզիկ-մարզիկուհիներ, դուք այսօր բախտաւոր սերունդ էք եւ կը վայելէք Ամերիկայի ու Գանատայի

բոլոր բարիքները: Սիրելիներ, ահա ահա սիկ դուք այստեղ ունիք Հայ Կեդրոնը, որուն կողքին ունիք Հայ Երիտասարդական Կեդրոնը, Համազգայինի թատերասրահը, Հ.Մ.Ը.Մ.ի մարզասրահը ու նաև Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին իր ժրջան հոգեւոր հովիւով՝ Մեղրիկ Ծ.Վրդ. Բարիքեանով: Այստեղ փոքրիկ Հայաստան մըն է: Կը մաղթեմ ձեզի, որ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով միշտ պատրաստ ըլլաք օգտակար դառնալու ուրիշին»:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Արմէն Կէտիկեան: Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք տարիներէ ի վեր նեցուկ կը կանգնին Հ.Մ.Ը.Մ.ին, որուն առաքելութեան հանդէպ իրենց ցուցաբերած վստահութիւնը ուժ եւ խթան կու տայ բոլոր կամաւորներուն, որպէսզի շարունակեն աշխատանքը՝ երիտասարդները մեր մօտ պահելու եւ հայրենիքի սէրը անոնց մէջ արմատացնելու համար:


Իր խօսքին երկրորդ մասով, եղբ. Կէտիկեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատեան» կարգի յուշամետալին որդեգրման հոլովոյթը եւ անոր տուչութեան պայմանները: Ան յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումը՝ Գանատայի շրջանէն ուժ խմբապետ-խմբապետուհիներու տալու այդ յուշամետալը եւ տեղւոյն վրայ կատարեց Թորոնթօ գտնուող քոյր-եղբայրներու տուչութիւնը: Յուշամետալներ ստացան քոյրեր Սօսի Թաշճեան, Հելէն Նաճարեան, եղբայրներ Փանօ Սարխանեան եւ Հրաչ Նաճարեան:

Ապա, օրուան հանդիսավար քոյր Կարինէ Քէօսէեան հրաւիրեց մարզախաղերուն մասնակից մասնաճիւղերու ներկայացուցիչները, որոնք Գանատայի Շրջանային Վարչութեան անդամներուն ձեռամբ ստացան յուշատախտակներ: Այնուհետեւ, յաղթական խումբերը հրաւիրուեցան եւ մետալներ ու բաժակներ ստացան Շրջանային եւ Կեդրոնական Վարչութեան անդամներուն եւ օրուան նախագահին ձեռամբ:

Տողանցքը փակուեցաւ շեփորախումբին «Յառաջ նահատակ» քայլերգին կատարումով:

## ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՄԱՐԶԱԽԱՂ	ՏԱՐԻՔ	ՄԱՄՆԱՃԻՂ	ԴԱՍԱԽՈՐՈՒՄ
1 Ֆուտպոլ	Ծիլ տղաք- 10 տարեկան Ծիլ տղաք- 10 տարեկան	Գէմպրիճ Թորոնթօ	Առաջին Երկրորդ
2 Ֆուտպոլ	Կրտսեր տղաք Կրտսեր տղաք	Թորոնթօ Մոնթրէալ	Առաջին Երկրորդ
3 Ֆուտպոլ	Տարեցներ Տարեցներ	Թորոնթօ Գէմպրիճ	Առաջին Երկրորդ
4 Ֆուտպոլ	Երէց աղջիկներ Երէց աղջիկներ	Թորոնթօ Մոնթրէալ	Առաջին Երկրորդ
5 Ֆուտպոլ	Երէց տղաք Երէց տղաք	Մոնթրէալ Թորոնթօ	Առաջին Երկրորդ
6 Պասքեթպոլ	Ծիլ տղաք- 10 տակեան Ծիլ տղաք- 10 տակեան	Թորոնթօ Մոնթրէալ	Առաջին Երկրորդ
7 Պասքեթպոլ	Փոքր տղաք Փոքր տղաք	Գէմպրիճ Թորոնթօ	Առաջին Երկրորդ
8 Պասքեթպոլ	Կրտսեր տղաք Կրտսեր տղաք	Թորոնթօ Մոնթրէալ	Առաջին Երկրորդ
9 Պասքեթպոլ	Երէց տղաք Երէց տղաք	Փասատինա Թորոնթօ	Առաջին Երկրորդ
10 Ֆլոր Հաքի	Երէց տղաք Երէց տղաք	Թորոնթօ Մոնթրէալ	Առաջին Երկրորդ
11 Փինկ-փոնկ	Խմբային Ա. խումբ Խմբային Գ. խումբ	Թորոնթօ Թորոնթօ	Առաջին Երկրորդ
12 Փինկ-փոնկ	Անհատական Անհատական	Սեւակ Գաբրիէլեան (Լաւալ) Վահիկ Ղարախանեան (Թորոնթօ)	Առաջին Երկրորդ
13 Մրցաշարքի լաւագոյն մարզիկուհի Մրցաշարքի լաւագոյն մարզիկ		Անտրէա Ակոբեան (Թորոնթօ) Սեւանտ Մինասեանց (Փասատինա)	
14 Ճատրակ	Ծիլ դասակարգ - 10 տարեկան Ծիլ դասակարգ - 10 տարեկան	Դաւիթ Պարսամեան (Թորոնթօ) Ժոզէֆ Մովսէսեան (Թորոնթօ)	Առաջին Երկրորդ
15 Ճատրակ	Ծիլ դասակարգ - 12 տարեկան Ծիլ դասակարգ - 12 տարեկան	Բաֆֆի Գըլըպոգեան (Թորոնթօ) Կարէն Տարաքճեան (Թորոնթօ)	Առաջին Երկրորդ



## ՆՈՒՒՐԵԱԼ ՈՒ ՀԱՄԵՍՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ՎԱՀԷ ՄԻՆԱՍԵԱՆԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Գիտեմ մահը բոլորին է,  
Բայց կարծեցի զիս պիտի շրջանցե՛լ»:  
ՈՒԻԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆ



2001, Պէյրուօ. Եղբ. Վահէ (Ոսրի, ձախէն առաջինը) համա-  
Հ.Մ.Ը.Մ.ական 5րդ մարզախաղերուն, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի  
Ֆութպոլի վեթերաններու խումբի մարզիչ:

### Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր մը ՊԵՅՐՈՒԹ

**Վ**աստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ականներու տերեւ-  
թափը կը շարունակուի: Նոյեմբեր 2011ին,  
եղբայր Վահէ Մինասեանի մահուան գոյժը  
տխրեցուց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի բոլոր եղ-  
բայրները եւ ծանօթները: Ան մեզմէ անվերա-  
դարձ բաժնուեցաւ, մեզի ձգելով մեծ հաւատքով սիրած հայ-  
րենիքին եւ իր պատկանած միութեան գոհարեցուցելու առա-  
քելութիւնը:

Մահուան խորհուրդին ու անխուսափելիութեան շեշ-  
տակիօրէն նայողներուն համար անակնկալ չէր եղբ. Վահէին  
կորուստը: Իսկ ինքը, իր դիտանկիւնէն, կ'արհամարհէր իրեն  
սպասող ճակատագիրը, կը շարունակէր իր առօրեան, ոչինչ  
պատահածի նման՝ շարունակելով մնալ զինուորագրեալը եւ  
արթուն պահակը ազգային ու գաղափարական իր տասնա-  
բանեային:

Մեծ եղաւ եղբ. Վահէին ներդրումը Հ.Մ.Ը.Մ.ին, նախ իր-  
րեւ ֆութպոլի մարզիչ, ապա՝ ներկայացուցչական խումբի  
մարզիչ: Իր օրով՝ 1969-1970ին, Հ.Մ.Ը.Մ. Լիբանանի ֆութ-  
պոլի ախոյեանութիւնը նուաճեց վերջին անգամ:

1970ին, Ասիոյ ֆութպոլի ախոյեանու-  
թեան մրցաշարքին, Հ.Մ.Ը.Մ. երրորդ դիրքը  
գրաւեց մարզիչին ու մարզիկներուն ջանասի-  
րութեամբ:

Մենք կը հաւատանք մեզմէ անվերադարձ  
բաժնուողներուն յարգանքի տուրք տալու  
աւանդութեան եւ, մեր կարգին, կու գանք  
ոգեկոչելու Հ.Մ.Ը.Մ.ական մեր եղբոր՝ Վահէ  
Մինասեանի յիշատակը:

Մէկիկ-մէկիկ մեզմէ բաժնուող սերունդը  
իր գործը աւարտելով կ'երթայ այս աշխար-  
հէն, բայց կը ձգէ բաց մը, որ հետագային ո'չ  
մէկ սերունդ ի վիճակի պիտի ըլլայ լրացնե-  
լու: Անհետացող սերունդը իրեն հետ կը տանի  
նաեւ պատմական մեր յիշողութիւնը, որ  
փաստագրական տուեալներէ աւելի մեծ նշա-  
նակութիւն ունի մեզի համար:

Խօսելով եղբ. Վահէ Մինասեանի յատկութիւններուն ու  
չեշտուած հայրենասիրութեան մասին, պէտք է նկատի ունե-  
նալ անոր անբասիր նկարագիրը, բարի ու հայրենասէր ոգին,  
հարցերը իրենց յատուկ բարեմասնութեամբ դիտելու մօտե-  
ցումը, գաղտնապահ, եսասիրութենէ ու ինքնագովութենէ  
հեռու մնալու Հ.Մ.Ը.Մ.ական կերպարը:

Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղը յաւէտ պիտի յիշէ անոր

## ՄԱՀԱԶԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչու-  
թիւնը կը գուժէ իր շրջանի վաստակաւոր ան-  
դամներէն եւ Շրջանային Վարչութեան նախկին  
ատենապետ՝

### ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ԱՃԵՄԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 29 Նո-  
յեմբեր 2011ին:



Ծառայութիւններն ու վաստակաշատ ներդրումը:

Բազմազան եղած են եղբ. Վահէ Մինասեանին ծառայութիւնները, զորս ան մատուցած է բոլորին, ամէնուն անխտիր: Յիշելու համար զինք պէտք է յիշենք իր կեանքի ճանապարհը եւ բանաստեղծին նման հարց տանք.

«Կեանքէն ինծի ի՞նչ մնաց,  
Ի՞նչ որ տուի, ուրիշին,  
Տարօրինա՛կ, ա՛յն միայն...»:

Քիչերու վիճակուած է առաքինութեամբ ապրիլ ու առաքինութեամբ մեռնիլ:

Եղբ. Վահէ մեզմէ բաժնուեցաւ ու այս աշխարհէն գնաց տալով իր կարելին, սակայն ան մեր յիշողութեան յանձնեց

ազգային իտէալի մտածումը, զոր հետագային պիտի կարողանանք իրագործել:

Թրծուած Հ.Մ.Ը.Մ.ականը այն է, որ կը ցուցաբերէ հոգեկան գոհունակ խանդավառութիւն եւ սրտակցութիւն, աւելի մօտ ըլլալու իր շրջապատին, հաւատարիմ մնալով իր կատարած երդումին, ինչպէս նաեւ՝ իր գերադաս մարմիններուն:

Վարձքդ կատար սիրելի՛ եղբայր, քեզ ընդունած հոգր թող թեթեւ գայ յոգնատանջ ուսերուդ:

Խունկ ու մոմ անթառամ յիշատակիդ:

## ՄԱՀԱԶԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գուժէ իր շրջանի վաստակաւոր անդամներէն եւ Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ՝

### ԵՂԲ. ՎԱՐԴԳԷՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 28 Դեկտեմբեր 2011ին:

*'Made from one single slice  
of natural Australian opal'*



*Classique*  
OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.*

*123 Clarence Street*

*Sydney 2000*

*Australia*

Phone: +61 2 9290 2199

fax: +61 2 9262 1630

Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)

Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)

# ՊՈՒՊՈՒԿՆԵՐ

## Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան ՊԵՅՐՈՒԹ

**Ճ**ափոնի մէջ, պուպրիկները կը խորհրդանշեն գերբնական տիպարներ: Օրինակ, կը տեսնենք աստուածներու արձանիկներու, վհուկներու եւ սիրուած հէքիաթներու հերոսներու տիպարներով պուպրիկներ: Հոս փոքրիկները կ'ըլլան պատուիրատուները եւ ամէն տարի կ'արտադրուին այն պուպրիկները, որոնք աւելի շատ երկրպագու կ'ունենան:

Ֆիլիփինի մէջ, աւանդութեան համաձայն, պուպրիկը տան երջանկութիւն կը բերէ, իսկ երբ կորսուի կամ կորսուի՝ վատ նշան կը նկատուի: Հոս իրարու պուպրիկ նուիրելը բարեմաղթութիւն է:

Յոյն երեխաները կ'ըսեն, որ պուպրիկը իրենց ընկերն է, խորհրդատուն, մտերիմը: Գիւղերու մէջ նոյնիսկ սովորութիւն կայ, որ երբ աղջիկ մը ամուսնանայ՝ հետը կը տանի իր սիրած պուպրիկը:

Ֆրանսայի Քանն քաղաքին մէջ կը գտնուի հռչակաւոր «Մանկութեան թանգարանը», ուր կը պահուին 4000է աւելի խաղալիքներ:

Հնդկաստանի Տելհի քաղաքին մէջ կը գտնուի պուպրիկներու միջազգային

թանգարանը, ուր կան 6700է աւելի պուպրիկներ՝ հաւաքուած աշխարհի 80 երկիրներէ:

Լոնտոնի մէջ կը գրտնուի մոմէ պուպրիկներու նշանաւոր թանգարանը:

Մեր հայրենիքին՝ Հայաստանի մէջ, պուպրիկներու պատրաստութիւնը ունի 2000 տարուան պատմութիւն:

Սկզբնական շրջանին պատրաստուած են կաւէ, ծղօտէ (ցօղունէ), այնուհետեւ՝ պրոնզէ, արծաթէ, քարէ արձանիկներ: Վանի պուպրիկները կ'առանձնանային իրենց կոշտ քաթանէ գգեստներով: Սեւանի աւազանին մէջ պահպանուած են փայտէ, իսկ Զանգեզուրի մէջ՝ քարէ պուպրիկներ: Ըստ աւանդութեան, Հայաստանի մէջ, Զատիկուան տօնին պատրաստուած են նաեւ «ուտելու պուպրիկներ», որոնց գլուխը ներկուած հաւկիթ էր, իսկ ձեռքերն ու ոտքերը՝ կանաչեղէն:




## ԻՆՉՊԵՍ ՄԱՐՍԻՆԸ ԿԸ ԳԻՏՆԱՅ, ԹԷ ԺԱՄԱՆԱԿՆ Է ԱՌԹՆԱԼՈՒ



**Մ**եր ուղեղին մէջ կան յատուկ կեդրոններ, որոնք կը կառավարեն քնանալու եւ արթննալու մեր ժամանակացոյցը: Անոնք մեր ներքին ժամացոյցներն են եւ կանգ կ'առնեն այն ժամանակ, երբ արեւը մար կը մտնէ:

Այդ կեդրոնները լաւ գիտեն, թէ ե՞րբ պիտի ծագի արեւը, ըստ այնմ ալ անոնք առաւօտեան կը վերսկսին իրենց աշխատանքին ու կ'արթնցնեն մեզ: Եթէ ելեկտրական յոյսերը չըլլային, մեր ներքին ժամացոյցները աւելի ճիշդ կ'աշխատէին, եւ մենք ամէն օր կը քնանայինք ու կ'արթննայինք արեւուն հետ միասին:





# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՁԳԱՅԻՆ ՊՈՒՊՐԻԿՆԵՐԸ



## ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:  
Կու գայ փափուկ-  
փափուկ,  
Կ'երթայ ծածուկ-  
ծածուկ:

Մեծերու համար՝ ցուրտ ու պաղ,  
Մանուկներուն՝ խինդ ու խաղ:  
(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր սանտր):

**Յ**այտնի չէ, թէ ո՞ր թուականէն ի վեր մանուկները սկսած են խաղալ պուպրիկներով:  
Առաջին պարզ պուպրիկը կը տեսնենք քարայրներու մէջ ապրող մարդոց քով: Ան պատրաստուած է ծառի ճիւղերէ եւ մամուլի՝ կաշիէ:  
Իւրաքանչիւր ազգ ունի իրեն յատուկ պուպրիկը: Մենք՝ հայերս ալ ունինք մեր ազգային պուպրիկը, որ կը կոչուի Նուրի: Ան իր քով ունի մանչ պուպրիկ մը, որ կը կոչուի Փահլեփան:  
Մեր մամիկները Նուրիները կը պատրաստէին լաթերու մէջ թխմելով:  
Գորգերու մաշած մասերէն Նուրիին հագուստ կը կարէին, իսկ օտքերուն կ'անցընէին կաշիէ տրեխներ՝:  
Նուրիով խաղացող փոքրիկները կ'երգէին Նուրիին երգը.

Նուրին Նուրին եկել է,  
Շալէ շապիկ հագել է  
Կարմիր գօտի կապել է,  
Նուրի, Նուրին ի՞նչ կ'ուզէ.  
- Երկնքից գաթայ կ'ուզէ:

Մամիկները երբ գաթայ՝ բառը լսէին, կը ձգէին իրենց գործը եւ իրենց փոքրիկներուն համար կը պատրաստէին գաթայ, որպէսզի ուրախացընեն գանոնք:

Վարդավառին մարդիկ անձրեւ կը խնդրէին Նուրիին բերանով, որպէսզի բերքը առատ ըլլար:  
Անոր համար Նուրին երբեմն կը կոչէին «անձրեւի պուպրիկ»:

\*Մամուլ- Նախապատմական հսկայ փիղ:  
\*Գաթայ- Անուշեղէնի տեսակ. երկու շերտ խմորի միջեւ փոխիսնդով պատրաստուած համեղ հաց:  
\*Տրեխ- Առանց կրունկի կաշիէ մուճակ կամ կօշիկ:



## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

	6		5		9		
5		1				6	7
	4		1	7		5	
6			3	1			4
		9		7		3	
1			4	9			5
	1		5	8		7	
3		7				1	2
	9			1			3

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկումով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ զետեղուած են:

### Նախորդին լուծումը

3	6	9	5	8	4	1	2	7
8	7	4	1	2	9	3	5	6
1	5	2	3	7	6	9	4	8
7	9	6	8	4	1	2	3	5
2	4	3	9	5	7	6	8	1
5	8	1	2	6	3	4	7	9
6	1	7	4	3	8	5	9	2
4	2	8	6	9	5	7	1	3
9	9	5	7	1	2	8	6	4

Պատասխանը՝ յաջորդիւ



### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Ֆրանսայի ֆուտբոլի կազմերէն:
- Արեւելեան տիտղոս - Իգական օտար անուն:
- Յարատեւ - Բազմութիւն:
- Իրանեան լրատու գործակալութիւն - Հարցական դերանուն:
- Սպանացի միջազգային միջնապահ:
- Իգական անուն - Հոգածութիւն - Հայ նահապետ:
- Խորհրդային շրջանի վատահամբաւ բռնապետ - Համեմուած կերակուր:
- Սեւեռուն - Շագանակ - Ժամանակ:
- Մուկերու ծուղակ - Կռտած արու ոչխար - Որ:
- Զայնանիշ - Անձնական դերանուն - Կնիւն:
- Յուցական ածական - Մովագոյն:
- Գործ մը աւարտելու վճարովի յանձնառութիւն - Ժամանեք:
- Արաբական մայրաքաղաք - Արական անուն - Յուցական ածական:
- Դաշնակցական նախկին մամուլէն - Իսլամական սուրբ լեռ:
- Երկրորդաւ մը - Ռուսիոյ կայսր - Տոհմ-Վտակ:
- Զողալ - Ռուսերէն՝ այո՛ - Արմէն Գարոյի ծննդավայրը:
- Արցախի լեռներէն - Թունաւոր մեծ սարդ:
- Այբուբենէն - Իտալական ծագումով՝ գաղտնի կազմակերպութիւն - Մտմտուք:
- Սիկիլեան հրաբուխ - Ամբողջովին - Հայաստանի գետերէն:
- Անկոփ - 1998ի ողիմպիականները հիւրընկալած քաղաքը:

### ՈՒՂԱՀԱՅԵԱՅ

- Մետաղեայ առածգական կազմած - Լայզա Մինելիի ֆիլմերէն:
- Ս. Յարութեան տօն - Ընտիր մուշտակով կզաքիս - Եւրոպական ընդլայտակեայ զինեալ կազմակերպութիւն մը:
- Զղջում - Մարդէ սերած՝ առասպելական կենդանի - Այբուբենէն - Կրկնուած բաղաձայններ:
- Բաֆֆիի երկերէն - Իգական - Զեռքի մաս:
- Յորենի թարմ հասկ - Երիկամունք - Այծուղտ - Կանացի կոշական բառ:
- Նուրբ ալիւր - Իգական օտար անուն - Ամերիկացի թենիսմէն:
- Գիւղացիի կօշիկ - Տարածքի միաւոր - Արական անուն:
- Կանացի օտար շաբաթաթերթ - Զեռնառումը - Տառի մը դրացիները - Հալուէ, մաքրադեղ:
- Եւրոպական մայրաքաղաք - Լծկան կենդանի:
- Իրաքեան լրատու գործակալութիւն - Ամպով ծածկուած - Խարան - Ֆրանսական գետ:
- Արական օտար անուն - Տաղաչափեալ քերթուած - Կլոր բուրգ:
- Յուցական ածական - Արտաքսել - Աստիճան:
- Մեղմ հով - Փոյթ - Թայուանի նախկին անուանումը:
- Կաթսայ - Պարտիզայանի գործիք - Վախկոտ - Նախագաս ածանցակերտ մասնիկ:
- «ԵՈՒ-ԷՖ-Ա»ի նախագահը - Զայնանիշ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ԹԻՒ 196 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒՇՈՒՄԸ



ՄՈՆԹՐԻԱԼԻ Հ.Մ.Ը.Մ. «ԿԱՄՔ»Ի ՍԿԱՌԻՏՆԵՐ